Azg
6 ՓԵՏՐՈՒԱՐ 1997, ՀԻՆԳՇԱԲԹԻ # 22 (1276)

Սոլանան Անկարայում՝ թուրք-հունական լարվածությունը մեղմելու նպատակով

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, փետրվարի 5-ին Անկարա ժամանեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան: Արտգործնախարարության բանբեր, ավագ դեսպան Օմեր Աբելը ասաց, որ Սոլանան Անկարայում հանդիպումներ կունենա վարչապետ Ն. Էրբաքանի, արտգործնախարար Թ. Չիլլերի, բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Իսմայիլ Հաքը Քարադայիի եւ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ: Սոլանային կընդունի նախագահ Ս. Դեմիրելը:

«Փաստի» հաղորդմամբ՝ Սոլանայի երկօրյա այցի նպատակն է Հունաստանի ու Թուրքիայի միջեւ վերջերս առավել շեշտված լարվածությունը մեղմելը:

Սոլանան, որն անցյալ տարի Հունաստան եւ Թուրքիա էր այցելել նույն նպատակով, պետք է փորձի համոզել Անկարայի իշխանություններին, որ վստահություն ներշնչող քայլերի դիմեն՝ ապագայում զինվորական որեւէ ճակատման առաջն առնելու համար:

Նա նաեւ պետք է ճնշի Թանսու Չիլլերի այն պահանջները, թե Անկարան կարող է վետոյի ենթարկել ՆԱՏՕ-ն դեռի արեւելք ընդարձակելու ծրագիրը, եթե եվրոպական միությունը շարունակի ձգձգել Թուրքիայի անդամակցության դիմումը:

ՂԱՐԱԲԱՂ

Ադրբեջանը ապատեղեկացնում է միջազգային հանրությանը

«Ֆրանսիական լրատվամիջոցներով Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի վերջերս տարածած տեղեկությունը այն մասին, թե ԼՂՀ կողմից վերահսկվող տարածքները իբր պաշտպանում են ՀՀ զինված ուժերը, չի համապատասխանում իրականությանը»: Այդ մասին «Ազգի» թղթակցին ասաց պաշտպանության եւ ԱԱ հարցերով ԼՂՀ Աժ հանձնաժողովի քարտուղար Ռուդոլֆ Մարտիրոսյանը: Պատգամավորի խոսքերով, ադրբեջանական առաջնորդը գիտակցաբար ապատեղեկացնում է միջազգային հանրությանը, քաջատեղյակ լինելով, որ ԼՂՀ զինված ուժերը 96 տոկոսով կազմված են ղարաբաղցիներից: ՀՀ եւ ԱՊՀ երկրներից ժամանած ծագումով ղարաբաղցի սակավաթիվ կամավորականները կազմում են ղարաբաղյան բանակի ընդամենը 4 տոկոսը:

Մարտիրոսյանը այն կարծիքը հայտնեց, որ Ալիեւը հետաքրքրում է զուտ քարոզչական նպատակ՝ հերթական անգամ փորձելով ապացուցել ՀՀ գոյություն չունեցող տարածքային պահանջախնդրությունը Ադրբեջանի նկատմամբ եւ տրամաբանական բացատրություն տալ ղարաբաղյան ճակատներում ադրբեջանական զորքերի կրած պարտություններին: «Ագրեսոր պետության ղեկավարը մոռանում է այն մասին, որ Ադրբեջանի զինված ուժերի էլիտար ստորաբաժանումները հիմնականում համալրված են թուրք հրահանգիչներով, «գորշ գայլերի» գրոհայիններով, աֆղան մոջահեդներով եւ պակիստանցի օդայուններով: Պարզ է, որ նման պայմաններում ԱՊՀ-ում եւ մասնավորապես ՀՀ-ում բնակվող ղարաբաղցիները օրհասական պահին պետք է օգնության հասնեին իրենց հայրենակիցներին», վերջում նշեց հանձնաժողովի քարտուղարը:

ՎԱՀԲԱՐ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Նախապատրաստվում է ռուս-հայկական մեծ պայմանագիր

ԵՐԵՎԱՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ռուսաստանի եւ Հայաստանի երկկողմ համագործակցության բանակցություններում Հայաստան ժամանած Ռուսաստանի Դաշնության պետական պատվիրակության մի մասը աշխատում է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ նարկումը շարունակվում է աշխատանքային խմբերում: Ա. Ռիբալչենկոն նշեց, որ տնտեսական հարցերի մեծ մասի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել:

Փետրվարի 5-ին ռուսաստանյան պատվիրակությանն ընդունեցին ՀՀ վարչապետ Արմեն Սարգսյանը եւ

«Բարեկամության համագործակցության եւ փոխօգնության մասին» մեծ պայմանագրի նախապատրաստման ուղղությամբ: Ինչպես հաղորդեց ՀՀ-ում ՌԴ դեսպանության խորհրդական Անատոլի Ռիբալչենկոն, կատարվում է պայմանագրի տեքստի հոդված առ հոդված քննարկում:

Փետրվարի 4-ին կայացել է երկու երկրների պատվիրակությունների լիագումար նիստ: Տնտեսական, ինչպես եւ արտաքին գործերի նախարարությանն առնչվող հարցերի քննարկումը շարունակվում է աշխատանքային խմբերում: Ա. Ռիբալչենկոն նշեց, որ տնտեսական հարցերի մեծ մասի վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել:

Փետրվարի 6-ին կկայանա լիագումար նիստ, որ կշարունակվի մեծ համաձայնագրի տեքստի պատրաստման աշխատանքը: Օրվա երկրորդ կեսին պատվիրակությանը կընդունի Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

Պատվիրակությունը որը գլխավորում է ՌԴ հատուկ հանձնարարությունների դեսպան Վսեւոլոդ Օլեանդրովը, Հայաստանում կմնա մինչեւ փետրվարի 7-ը:

ԵՐԵՎԱՆ

Վազգեն Սարգսյանին ոչ ոք չի պաշտոնազրկելու

Նախագահի մամուլի քարտուղարն այդ մասին պտտվող լուրերը համարեց հակապետական քարոզչություն

«Ուժային նախարարների որեւէ փոփոխություն չի լինելու», այս մասին երեկ հայտարարեց ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Լ. Զուրաբյանը, ընդգծելով, որ ըստ իրենց աղբյուրների, դա միտումնավոր տարածվող լուր է: Նա հատկապես հերքեց պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի հնարավոր պաշտոնազրկման մասին լուրերը, համարելով, որ դրանք բանակը ներքին խաղաղականության մեջ ներքաշելու փորձեր են: Մամուլի քարտուղարը դա համարեց հակապետական քարոզչություն: Միաժամանակ, նա լրագրողներին ներկայացրեց նախագահի ստորագրած նոր հրամանագիրը 1996 թ.-ի նոյեմբերի 8-ի «ՀՀ դատաիրավական համակարգի բարեփոխման մասին» հրամանագրի կատարմանն ուղղված միջոցառումների մասին, որով դատաիրավական համակարգի բարեփոխումների ծրագրի հետ կապված աշխատանքները կազմակերպելու եւ համակարգելու նպատակով ստեղծվել է պետական հանձնաժողով՝ վարչապետ Ա. Սարգսյանի նախագահությամբ: Այդ հանձնաժողովը 20-օրյա ժամկետում նախագահի հաստատմանը պետք է ներկայացնի դատաիրավական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացման, այդ թվում անհրաժեշտ օրենսգրքերի եւ կարեւորագույն օրենքների ընդունման ժամանակացույցը: Լ. Զուրաբյանն իր հերթին ավելացրեց, թե դատաիրավական համակարգը դեռ շարունակում է մնալ ծնունդ առնող նոր ժողովրդավարական իրավակարգի եւ ժառանգած խորհրդային վարչակարգվածքի հիբրիդ:

«Դեռ շարունակում են գործել ժողովրդավարական հասարակարգին անհարիր հին իրավական նորմերը, որոնք տեղ են տալիս վարչական կամայականություններ համար, սահմանափակում մարդու իրավունքները եւ ազատությունները, խոչընդոտում երկրի եւ հասարակության ազատ զարգացմանը», հայտարարեց մամուլի քարտուղարը: Նրա ասելով, ծրագիրը նախատեսում է օրենսդրական դաշտի փոփոխություն եւ ինստիտուցիոնալ վերափոխումներ: Օրենսդրական վերափոխման հիմքը կկազմեն խաղաղաշիական, քրեական, խաղաղաշիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերը, դատարանակազմության մասին օրենքը: Ինստիտուցիոնալ վերափոխումները ներառում են Սահմանադրությամբ նախատեսված առաջին ատյանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների ստեղծումը: Մամուլի խոսնակի ասելով, 1998 թ. դատավորներն արդեն կնշանակվեն ցմահ, իսկ դատավորների թիվը մոտավորապես կլինի 150: Նա համաձայնեց, որ դատաիրավական համակարգի բարեփոխումները կանդրադառնան նաեւ ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությանը, բայց առայժմ որեւէ գնահատական չտվեց անցած ամիսների ընթացքում ՆԳ եւ ԱԱՆ-ի գործունեությանը, նշելով, որ դեռ վաղ է:

Ա. Հ.

ԱՊՀ գագաթաժողովը մարտի 15-ին

5 ՓԵՏՐՎԱՐ, ՌԼ: Ռուսաստանի Դաշնության ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների հարցերով նախարար Աման Տուլեեւը հաղորդեց, որ Անկախ պետությունների համագործակցության գագաթաժողովը հավանաբար տեղի կունենա մարտի 15-ին: Տուլեեւի խոսքերով, ԱՊՀ գործադիր քարտուղար Իվան Կորոչենյան գագաթաժողովի գումարման ժամկետն այժմ համաձայնեցնում է ԱՊՀ երկրների ղեկավարների հետ: ԱՊՀ գագաթաժողովը 2 անգամ հետաձգվել է: Պաշտոնական լրատվության համաձայն, դա տեղի է ունեցել գագաթաժողովի գումարման հարցի շուրջ առաջացած տարաձայնությունների հետեւանքով, Ռուսաստանի Դաշնության նախագահի օգնականները հերքում են այն լուրերը, որոնց համաձայն գագաթաժողովի հետաձգման պատճառը Բորիս Ելցինի հիվանդությունն էր:

ՇՐՋԱՆ

Ըստ «Հյուրրիյեթի»՝ Ալիջան-Մարգարա սահմանային դրան բացումը հավանական է

ԵՐԵՎԱՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիա-Հայաստան սահմանը շարունակում է մնալ փակ, սակայն սահմանային դրան բացումը մնում է միշտ օրակարգում, գրում է «Հյուրրիյեթ» թերթը փետրվարի 5-ի հրապարակման մեջ, նշելով, որ վերջին ժամանակներս հավանական է դարձել Ալիջան-Մարգարա ավելի քան 41 տարի՝ փակված սահմանային դրան բացումը: Ըստ այդ հրապարակումների, Թուրքիայի ցամաքային, նավամարտերի ընդհանուր տնօրինության նախաձեռնությամբ՝ վերջին վեց ամիսների ընթացքում գգալի աշխատանք է կատարվել Իգդիր քաղաքի սահմանին գտնվող 20 կիլոմետրանոց նահանգների ընդլայնման եւ կարգավորման ուղղությամբ: 15 կիլոմետրանոց հատվածում այդ աշխատանքներն ավարտված են:

Իսկ Էրզրումի առեւտրական պալատի նախագահ Լյութֆի Էվջելիքը նշել է, որ Վրաստանը եւ Իրանը Թուրքիայից գնում են զանազան սննդամթերք ու ապրանքներ՝ դրանք էկենոմատիկ գներով վաճառելով Հայաստանում: Մինչդեռ Էվջելիքի ասելով, Հայաստանի հետ սահմանային դրան բացումը հարված կլինի վրացի եւ իրանցի առեւտրականներին, նաեւ կարեւոր դեր կխաղա տարածաշրջանի զարգացման գործում: «Դեռեւ Հայաստան բացվող սահմանային դուռը, նշել է նա, կվերակենդանացնի Արեւելքը»:

ՀԱՄԱՌՈՏ

ԱՄՆ-ը իրեն իրավունք է վերապահում...

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՍԵՆՊՐԵՍ-ՍՏԻՏ: ԱՄՆ-ը իրեն իրավունք է վերապահում իր հատուկ ծառայությունների ուժերով ուրիշ պետությունների տարածում ձերբակալել ահաբեկչական կազմակերպություններին պատկանելու մեջ կասկածվող անձանց: Փաստորեն այսպիսի հետեւություն է արվում նախագահ Քլինթոնի կարգադրությունից, որի ավելի վաղ գաղտնիացված հոդվածները հրապարակվել են երեքշաբթի: «Կասկածելի անձին վերադարձնելու համար կարող է ուժ գործադրվել առանց այն պետության համաձայնության եւ մասնակցության, որի տարածքում գտնվում է կասկածվողը», ասվում է Բիլ Քլինթոնի ստորագրած թիվ 39 կարգադրության մեջ:

Պետդումայի նոր հարձակումը Չուբայսի վրա

5 ՓԵՏՐՎԱՐ, ՌԼ: Ռուսաստանի Պետդուման այսօր ընդունեց մի բանաձեւ, որով նախագահ Բորիս Ելցինին կոչ է արվում ուսումնասիրել այն հաղորդագրությունները, որոնց համաձայն իր վարչակազմի ղեկավար Անատոլի Չուբայսը խախտել է դաշնային օրենքը հարկերի վճարման մասին: Բանաձեւն ընդունվեց 235 կողմ, 19 դեմ եվ 5 ձեռնարկությամբ: Չուբայսի կողմից հարկերը չվճարելու մասին տեղեկությունները Պետդուման ներկայացրել է նաեւ Ռուսաստանի գլխավոր դատախազին: Չուբայսը հերքում է այդ մեղադրանքները եւ պնդում, որ 96 թվականին իր վաստակած շուրջ 300 հազար դոլարից մոտ 95 հազարը վերջերս մուծել է որպես հարկ: Չուբայսը Պետդումայի պատգամավորներին մեղադրում է դրամատնից գողացված մասնավոր արձանագրությունները հանրությանը հանձնելու համար, իսկ ընդդիմադիր ուժերը պնդում են, որ օգտվելով Բորիս Ելցինի երկարատեւ բացակայությունից, Չուբայսը չարաշահում է իր պաշտոնական դիրքը: Այսօր Պետդումայում ընդունված բանաձեւը նախագահ Ելցինին կոչ է անում բարձրաստիճան բոլոր պաշտոնյաներից խստորեն պահանջել օրենքով նախատեսված չափերով վճարել հարկերը:

Ամենամեծ ավիավթարը Իսրայելի պատմության մեջ

5 ՓԵՏՐՎԱՐ, BBC, VOA, RFI: Իսրայելում սգո օր է հայտարարված: Երեքշաբթի օրը Լիբանանի սահմանից ոչ հեռու 73 զինծառայող է զոհվել 2 ռազմական ուղղաթիռների բախումի հետեւանքով: Դա Իսրայելի օդուժի պատմության մեջ ամենամեծ ավիավթարն է: Հետաքննություն է սկսվել, սակայն այժմ էլ պարզ է, որ բախումը տեղի է ունեցել մառախուղի պայմաններում եւ այն պատճառով, որ ուղղաթիռները խուսափելով Հզբոլլահի մարտիկների գրոհից, լույսերը հանգցրած են թռել: Այդ ուղղաթիռները զինծառայողներ էին տեղափոխում Իսրայելի կողմից զավթված Հարավային Լիբանանի անվտանգության գոտի: Վերջին ժամանակներում, խուսափելով ավտոճանապարհներին Հզբոլլահի մարտիկների կողմից դրված ականներից, իսրայելցիները Հարավային Լիբանան զորքն ուղղաթիռներով են տեղափոխում: Իսրայելի նախկին վարչապետ Շիմոն Պերեսը հայտարարեց, թե այս ողբերգությունը հուշում է, որ Իսրայելը պետք է դադարեցնի պատերազմական վիճակը Լիբանանի եւ Սիրիայի հետ: Իսրայելի վարչապետ Նաթանյահուն հետաձգեց իր հանդիպումները Հորդանանի արքա Հուսեյնի եւ պաղեստինցիների առաջնորդ Արաֆաթի հետ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

ԱԺ-ի փետրվարի 5-ի նիստում շարունակվեց մտքերի փոխանակությունը 1997 թ. ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծի շուրջ: Կոմկուսի խմբակցությունից Գագիկ Թադեւոսյանը խորհրդարանին առաջարկեց «վեր կանգնել նեղ խմբակային շահերից» եւ «հնարավորություն տալ կառավարությանը եւ բյուջեին աշխատելու»: Այս ելույթից կարելի է ենթադրել, որ ՀԿԿ-ն կողմ է քվեարկելու բյուջեի նախագծին:

Գրիգոր Ավագյանն անդրադարձավ ատոմակայանի խնդրին, նշելով, որ հոծ բնակեցված վայրում ատոմակայան ունենալը մշտական սպառնալիք է Հայաստանի ազգաբնակչության գլխին: Այնուհետեւ խոսելով պետական տնտեսական հաղթականության մասին, Ավագյանն ընդգծեց, որ «խնայողությունը պետք է դրվի մեր հաղթականության հիմքում», եւ «մենք պետք է ամենախնայող ժողովուրդը լինենք»: Գր. Ավագյանը կարեւորեց նաեւ դպրոցներում համապատասխան գիտելիքների դասավանդումը խնայողության մասին: Առողջապահության նախարար Արա Բաբլոյանը նշեց, որ Հայաստանում 1 շնչին ընկնող պետական բուժսպասարկումը կազմում է 8 դոլար, իսկ օրինակ, Կանադայում 2400 դոլար: Բաբլոյանը նկատեց, որ մեծ դժվարությամբ հնարավոր է եղել պահպանել շատ օգնության համակարգը: Պաշտպանության նախարար Սահակյանն անդրադարձավ առողջապահության բնագավառում կատարվող բարեփոխումների ծրագրին, նշելով, որ այն պետք է սկսել կիրառել ասիճանաբար սկզբում Երեւանում, ապա մարզերում: «Ամենվել ծանր է մայրաքաղաքի առողջապահական վիճակը», ընդգծեց Սահակյանը:

Խիստ անկեղծ ելույթ ունեցավ Տավուշի մարզպետ Պավլիկ Ասատրյանը: Անդրադառնալով ստվերային տնտեսությանը Ասատրյանը հոսորական հարց ուղղեց ներկաներին, ասելով, «Ո՞վ է ասում, որ ստվերային էկոնոմիկա չպիտի լինի»: Խնդիրն, ըստ Ասատրյանի, գործ տնտեսությունը «ճիշտ հաշվելու» եւ «ճիշտ օգտագործելու մեջ է»: «Ստվերային էկոնոմիկան ճիշտ հաշվելու դեպքում կարելի է դարձնել լուսավոր էկոնոմիկա», եզրակացրեց ԱԺ պատգամավորը. Տավուշի

ԲՅՈՒՋԵ

«Խնայողությունը պետք է դրվի մեր հաղթականության հիմքում»

Պնդում է Գր. Ավագյանը, իսկ Տավուշի մարզպետը կոչ է անում «ճիշտ օգտագործել» ստվերային տնտեսությունը

ՍՊՈՒՏՅԱՆ

մարզպետը: Վերջին միտքն առաջ բերեց դահլիճի առողջ ծիծաղը, որը կարելի է «ձեւակերպել» այսպես՝ ես էլ որ այդպես եմ մտածում, ամեն մտածած չէ, որ ասում են:

Թելման Տեր-Պետրոսյանը 1997 թ. բյուջեի այս վերջին տարբերակը համարեց «ամենաիրատեսականն ու իրականանալին»: Նա հայտարարեց, որ կողմ է քվեարկելու բյուջեին: Տեր-Պետրոսյանը միաժամանակ անընդունելի համարեց, որ բյուջեի դեֆիցիտի ծածկմանը կառավարությունը նախատեսում է նպատակաուղղել 14 մլրդ դրամական միջոցներ: Ըստ այդմ, նա մատնանշեց դեֆիցիտի ծածկման հետեւյալ աղբյուրները. ա) հաստատագրված հարկերի գանձում սպասարկման, տրանսպորտի ոլորտներից, բ) պայքար ստվերային տնտեսության անընդհատ աճի դեմ, գ) մաքսատուրքերի եւ դ) ակցիզային հարկի գանձում: Թ. Տեր-Պետրոսյանը խիստ դժգոհություն հայտնեց բանկային համակարգից, առանձնապես Կենտրոնական բանկից, ընդգծելով, որ «ԿԲ-ի կողմից տարվում է ոչ ճիշտ քաղաքականություն», հատկապես անհուսալի վարկեր տրամադրելու ուղղությամբ: Տեր-Պետրոսյանը մտահոգություն հայտնեց նաեւ արդյունաբերության շահութաբերության անկումից եւ ընդգծեց, որ «պետք է շրջադարձ կատարել դեպի արդյունաբերություն, որն ունենա սոցիալական ուղղվածություն»: Վերջում նա հույս հայտնեց, որ կառավարությունը հաջորդ անգամ կներկայացնի «վերատարադրություն առաջնորդող բյուջե»:

Այսօրվա նիստում կքննարկվի 1997 թ. պետբյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը:

ՆԱԲԻԼԵ ՄԿԲՏՉՅԱՆ

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ

Ատոմակայանի վթարի մասին հանձնաժողովի եզրակացությունը կուղարկվի ՄԱԳԱՏԷ

Փետրվարի 5-ին կայացավ ԱԺ-ի եւ կառավարության հարցուպատասխանը: Արամազդ Զաքարյանն անդրադարձավ սեպտեմբերի 25-26-ի հայտնի իրադարձությունների ժամանակ տուժած անձանց եւ հարցրեց նրանց հետագա ճակատագրի մասին: ՆԳ եւ ազգային անվտանգության նախարար Ս. Սարգսյանն իր պատասխանում նախ նկատեց, որ հարցը պետք է ուղղել դատախազությանը, ապա ավելացրեց, որ փետրվարի 6-ին Գերագույն դատարանում սկսվելու է նրանցից մի քանիսի դատավարությունը: Նախարարը միաժամանակ նկատեց, որ նախաքննության ժամկետները ոչ մի գործով չեն խախտվել:

Մյասնիկ Մալխասյանը հարցրեց Երեւան-Աղարան ճանապարհի աներթեւեկելիության մասին, միաժամանակ նշելով, թե «ում պարտականությունների կամ իրավասությունների ոլորտում է ճանապարհի առաջ ծյան մաքրումը մարզպետի՞, թե՞ տրանսպորտի նախարարի: Ի պատասխան տրանսպորտի նախարար Հ. Քոչինյանը նշեց, որ 4 օր առաջ ճանապարհը մաքրելու կարիք չկար, քանի որ... ձյուն չկար: Բացի այդ, ըստ նախարարի, ճանապարհը չի կարելի մաքրել նաեւ բքի ժամանակ: Իսկ երբ պատգամավորը տեղեկացրեց, որ 4 ժամում է անցել Երեւան-Աղարան ճանապարհը, Քոչինյանը խոստացավ, որ վաղը այդ ճանապարհը միասին կանցնեն:

Սերգո Երիցյանը էներգետիկայի նախարարին հարցրեց, թե ի՞նչ վիճակում է ատոմակայանի անվտանգությունը: Նախարար Գ. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ տեղի է ունեցել տեխնիկական վթար, որը էկոլոգիական եւ քիմիական որեւէ հետեւանք չի ունեցել. 18 վայրկյան հետո ավտոմատ կարգավորման շնորհիվ էլեկտրական հոսանքները դադարել են գործել: 1.5 վայրկյան իջել է հաճախականությունը եւ հասել 46.81 հց-ի, այնուհետեւ կարգավորվել է: Էներգետիկայի նախարարը միաժամանակ ավելացրեց, որ վթարի ամբողջական պատկերը պարզ կլինի հանձնաժողովի աշխատանքների արդյունքների ամփոփումից հետո: Այսօրվա դրությամբ ատոմակայանն արտադրում է 240 մեգավատ էլեկտրաէներգիա: Նախարարը նշեց, որ ատոմակայանի վթարի պատճառով հանրապետությունում էլեկտրաէներգիայի անջատումներ չկան: Եվ, քանի որ դահլիճը ընդգծված անհամաձայնություն հայտնեց նախարարի վերջին մտքին, նա ավելացրեց, որ անջատումները չվճարումների հետեւանք են: Տեղեկացվեց նաեւ, որ վթարի մասին հանձնաժողովի եզրակացությունը կուղարկվի ՄԱԳԱՏԷ-ին եւ Ռուսաստանի ատոմային վերահսկողության հանձնախմբին:

Վահագն Խաչատրյանի հարցն առնչվում էր դրամի կուրսի վերջին փոփոխություններին: Ֆինանսների նախարարը նշեց, որ կառավարությունը որդեգրել է դրամի ազատ փոխարկելիության կուրս. «ելնելով առաջարկի եւ պահանջարկի կոնյուկտուրայից», որը «ինֆլյացիոն սցենարի վրա որեւէ ազդեցություն չի կարող ունենալ»: Դրամի կուրսի փոփոխություններն, ըստ Լեւոն Բարխուդարյանի, կլինեն արժեզրկմանը համընթաց:

Ն. Մ.

ՀԱՄԱՌՈՏ

Եվրախորհրդի փորձագետները ծանոթանում են Հայաստանի իրավական համակարգին

ԵՐԵՎԱՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 4-ին Հայաստան ժամանեցին Եվրախորհրդի միջխորհրդարանական վեհաժողովի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամներ Դանիել Շվաբը, Ջերի Մակարչիկը եւ Քրիստիան Դուրանը: Այցի նպատակն է ծանոթանալ Հայաստանի իրավական համակարգին եւ Եվրախորհրդարանին եզրակացություն ներկայացնել ժողովրդավարության միջազգային չափանիշներին Հայաստանի իրավական համակարգի համապատասխանության վերաբերյալ: Փետրվարի 6-ին փորձագետները կհանդիպեն ՀՀ ԱԺ նախագահ Բ. Սարգսյանի, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հ. Իգիթյանի, ՀՀ ԱԺ կուսակցական խմբակցությունների եւ «Բարեփոխումներ» պատգամավորական խմբի անդամների հետ:

Հրանտ Խաչատրյանը վերընտրվեց ՍԻՄ-ի նախագահ

ԵՐԵՎԱՆ, 4 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սահմանադրական իրավունքի միության 8-րդ արտահերթ կոնֆերանսում Հրանտ Խաչատրյանը եւ Հայկ Բաբուխանյանը վերընտրվել են ՍԻՄ-ի նախագահի եւ փոխնախագահի պաշտոններում: Կուսակցության գրասենյակից հաղորդեցին, որ ընտրվել է նաեւ վերստուգիչ հանձնաժողով, տեղի է ունեցել նաեւ կուսակցության նոր անդամների ընդունելություն: Կոնֆերանսի մասնակիցները միաձայն իրենց հավատարմությունն են հայտնել կուսակցության հիմնական դրույթին, «Անկախ, ազատ, վերամիավորված եւ իրավական Հայաստանի կառուցում»:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պերճ Ստեփանյանը չի բացառում իր պաշտոնանկությունը

ԵՐԵՎԱՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ՓԱՍՏ: Պատասխանելով իր մոտալուտ հնարավոր պաշտոնանկության վերաբերյալ «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության թղթակցի հարցին, պետական հեռուստաընկերության տնօրեն Պերճ Ստեփանյանը նշել է. «Բավականին անորոշ վիճակ է: Պաշտոնանկությունը չեմ բացառում, որովհետեւ պաշտոնին մնալ-չմնալու հարցում վճռորոշն այն չէ, թե Պերճ Ստեփանյանը լավ է աշխատում կամ վատ: Աշխատանքիս ընթացքում տեսա, թե ինչպես տարբեր մարդիկ ու խմբավորումներ զանազան ազատառուսստարով արշավանք ծավալեցին հեռուստատեսության դեմ: Եվ ամեն մեկը ցանկանում էր իր ազդեցության ոլորտում տեսնել հեռուստատեսությունը, դրա համար դիմելով ցանկացած, երբեմն ոչ այնքան ոլորտեշ քայլերի: Մամուլը լի է հեռուստատեսության դեմ գրված միտումնավոր հրապարակումներով, բայց ես այդ մնալ-չմնալու պայքարի մեջ չկամ: Ցանկացած պահի պատրաստ եմ աթոռս զիջել այն մարդուն, ով այստեղ ավելի լավ կաշխատի»: Այդուհանդերձ, մինչեւ այս շաբաթավերջ դեռեւս Պերճ Ստեփանյանը պետք է հեռուստատեսության զարգացման վերաբերյալ առաջարկներ մերձայացմի կառավարության:

«Կանայք եւ զարգացումը» անկախ կենտրոնը կզբաղվի տեղեկատվության կուտակմամբ

Կանանց հանրապետական խորհուրդը եւ Կին ընտրողների լիգան փետրվարի 4-ին հրավիրված համատեղ ժողովում հիմնադրել են «Կանայք եւ զարգացումը» անկախ տեղեկատվական կենտրոնը: Նշված կազմակերպությունների ղեկավարները՝ Նորա Հակոբյանն ու Սիդա Թոփուզյանը երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ չբացառեցին, որ ապագայում կենտրոնը վերափոխվի կանանց հիմնահարցերով զբաղվող ինստիտուտի, իսկ առայժմ՝ իր լուման պետք է բերի կանանց շարժմանը:

Կանանց կազմակերպությունների ղեկավարները լրագրողներին ծանոթացրին կենտրոնի ստեղծման նպատակներին՝ կանանց վերաբերյալ համակողմանի տեղեկատվական նյութի կուտակում, վերլուծության տարածում, կանանց միջազգային եւ ազգային կազմակերպությունների մասին տեղեկատվության կուտակում ու հրապարակում, կանանց իրավիճակին վերաբերող ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերի գրադարանի ստեղծում, «Կանայք եւ զարգացումը»՝ մշտական գործող սեմինարի կազմակերպում եւ այլն:

Հիմնադիրները գտնում են, որ կանանց վիճակի մասին անկողմնակալ տեղեկատվության կուտակումը, ազգային եւ միջազգային փորձի համադրմամբ երկարաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի մշակումը, օրենսդրական փաստաթղթերի փորձագիտական վերլուծությունը կնպաստեն Հայաստանում կանանց կարգավիճակի բարձրացմանը եւ հռչակված իրավահավասարության կիրարկմանը: Նորաստեղծ կազմակերպության ինը հոգանոց կազմում ընդգրկվել են նաեւ Նորա Հակոբյանը, Սիդա Թոփուզյանը, Հրանուշ Խառատյանը եւ Կարինե Դանիելյանը:

Ս. Պ.

Ստեղծվում՝ 12 տեղամաս

ՍԵՏՍԱԿ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախկին թաղային կոմիտեներին Արագածոտնի մարզկենտրոնում այսուհետ կփոխարինեն տարածքային կառավարման տեղամասերը: Նորերս հաստատված կանոնադրության համաձայն, քաղաքը բաժանվել է 12 տեղամասերի, որոնք կղեկավարեն քաղաքապետարանի կողմից նշանակված պետերը: Ի տարբերություն նախկին թաղային կոմիտեների, տեղամասերին տրված են առավել լայն իրավունքներ ու լիազորություններ: Իրենց թաղամասերում եղած կոմունալ-կենցաղային, տնտեսական եւ այլ բնույթի շատ հարցեր նրանք ոչ միայն ներկայացնելու են քաղաքապետարանին, այլեւ վերջինիս բյուջեի միջոցների հաշվին լուծելու են դրանք:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941 AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՀԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայություններ / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Ցողանը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47, Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղեկատ

Երեկ փետրվարի 5-ին Ուկրաինայի դեսպանատունը հերթական անգամ դռներն էր բացել լրագրողների առջև. նպատակ ունենալով լրացնել այն բացը, որը դեռ առկա է Ուկրաինային վերաբերող շատ դրույթներում: Այս անհասկանալիս առեւտրի դրույթներում: Առեւտրական գլխավոր գործընկերը. բնականաբար մնում է Ռուսաստանը. բեւեւ մոտակա աղագան Ուկրաինային խոստանում է սերտ համագործակցություն նաեւ Եվրահամայնքի երկրների հետ: Այս կապակցությամբ. Ալեքսանդր Բոժկոն անդրադարձավ Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի Ֆրանսիա կատարած այցին (հունվարի 30-31). երբ ամենաբարձր մակարդակներում ստորագրվեցին դայմանագրեր ճակատային համագործակցության. մաքսային եւ կրկնակի հարկման խնդիրների առնչությամբ: Լեոնիդ Կուչմայի հանդիպումը Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ. ըստ Ալեքսանդր Բոժկոյի. լավ նախադրյալներ է ստեղծել Եվրոդայի երկու խոշորագույն երկրների համագործակցության համար ամենատարբեր ոլորտներում: Պարոն դեսդանն իր խոսքում կանգ առավ նաեւ Լեոնիդ Կուչմայի կողմից Դավոսում (հունվարի 31-ից փետրվարի 2-ը) ընթերցված վերլուծության վրա. կազմված Ուկրաինայի մակրոտնտեսական իրավիճակի հետ: Ընդհանուր առմամբ. նա դրական գնահատականի արժանացրեց Ուկրաինայի նախագահի դավոսյան հանդիպումները. որ ՀՀ իշխանությունների կողմից դեռ չի ստեղծվել համադասական հանձնաժողով. հիշեցնենք. որ Ուկրաինայում վաղուց արդեն ստեղծված է. եւ նույնիսկ մշակված են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերի նախագծեր: Ըստ դարոն դեսդանի. համատեղ հանձնաժողովը եթե ոչ այսօր. ապա վաղը գործելու է. եւ ՀՀ իշխանությունների կողմից ճիշտ կլիներ միշ արագացնել այդ գործընթացը: Հիշեցնենք. որ 1997-ի ամռանը նախատեսվում է ՀՀ նախագահի այցը Կիեւ. ինչի շնորհիվ սպասվում է հայ-ուկրաինական հարաբերություններում նոր որակական զարգացում: Ալեքսանդր Բոժկոն նկատեց միայն. որ հայկական հանձնաժողովի ստեղծումը հնարավորություն կընձեռեր կատարել լուրջ աշխատանք եւ արդեն դասրատել երկու նախագահների հանդիպման ժամանակ քննարկվելիք անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ:

Ա. Ղ.

ԵՐԵՎԱՆ

Ալեքսանդր Բոժկոն դժգոհում է դանդաղումից

Ասուլիս Ուկրաինայի դեսպանատանը

գամ խոսվեց հանրաքվեությունում 1996-ին գոյացած մակրոտնտեսական իրավիճակի մասին. մասնավորապես ՀՀ-ում Ուկրաինայի դեսդան Ալեքսանդր Բոժկոն խոսեց սղաճի. արտաքին առեւտրի. արտաքին ֆինանսավորման եւ ֆինանսաբյուջետային բնագավառներում արտնագրված ցուցանիշերի մասին: Այսդես. անցյալ տարի Ուկրաինայում սղաճը նվազել է 39.7 տոկոսով. մինչդեռ արդյունաբերական արտադրանքի ծավալը 1995-ի համեմատ նվազել է 5.1 տոկոսով: 1996-ի սեդտեմբերի 1-ից Ուկրաինայում մտցված է ազգային տարադրամ գրիվնա (1.89 գրիվնան մեկ ԱՄՆ դոլար փոխարժեքով): Արտահանման ծավալը 1996-ին կազմել է 18.580 մլրդ դոլար (21.5 տոկոսով ավելի. քան 1995-ին). ընդ որում ներմուծումը կազմել է գրեթե հավասար գումար 19.389 մլրդ դոլար: 1996-ին արձանագրվել է աշխուժացում Ուկրաինայի եւ ԱՊՀ. ինչդես նաեւ բալթյան երկրների միջեւ

Երկար սպասված ձյան առաջին դտուդները

Առաջին ձյունն ինչդես միշտ. անակնկալի բերեց հանրաքվեությունը. բեւեւ այս անգամ շատ ժամանակ կար վերջինիս դասրաստվելու համար: Տարօրինակ զուգադիպությամբ. առավոտյան ՀԱԷԿ-ի «տուրբոգեներատորի էլեկտրական շղթաների անսարքության դասճառով» կանգնեցվեց 2-րդ էներգաբլոկը եւ. չնայած էներգեսիկների հավաստիացումներին. թե բլոկի հարկադիր դադարդուդը չի անդրադառնա էներգամատակարարման ռեժիմի վրա. մայրաքաղաքի որոշ հատվածներում նկատվել են վերջին շրջանի համար շոշափելի (տեսողության իմաստով) ընդհատումներ (Արաբկիրի շրջան. Կենտրոն. Նորքի զանգվածներ եւ այլն): Ի դեղ. համեմատաբար կարճատեւ. սակայն գրեթե ամենօրյա ընդհատումները մինչ այդ էլ բույլ անհանգստություն էին դասճառում էլեկտրաէներգիայի բաժանորդներին հեռավոր կերդով հիշեցնելով նախորդ տարիների «հովհարային» ադրելակերդը. սակայն դրանք հիմնականում. որքան էլ զարմանալի է. համընկնում էին ցերեկվա. այսինքն էլեկտրասպառման բարձրակետին չհամադասասխանող ժամերին (վերջինս սկսվում է մոտավորապես երեկոյան ժամը 7-ին եւ ավարտվում ժամը 11-ի մերձակայքում). ուստիեւ չէին խաբարում քաղաքացիների շուրջօրյա էներգամատակարարումից օգտվելու հաճույքը:

Էներգետիկայի նախարարության լրատվական ծառայությունից տեղեկացանք. որ նախորդ օրվա 3-6-ժամյա ընդհատումներ կենտրոնացած բնույթ չեն կրել. այլ բերեւս կապված են եղել տեղական բնույթի վթարների հետ (որ անհավանական չէ ուշացած. բայց առաս ձյան հանկարծակի գրոհից չդադահովագրված. նախորդ տարիների երկժամյա էներգամատակարարումից առավելագույնս խարխլված. տարիներ շարունակ չնորոգվող էներգացանցի դայմաններում): Ինչ վերաբերում է «արտաեղանակային» եւ «արտավթարային» կարճատեւ անջատումներին. ապա վերջիններիս դատճառն. ինչդես դարզվում է. դրոֆիլակտիկ ստուգումներն են: Ճառայության դեկավար Ժ. Ղեւոնդյանը հայտնեց նաեւ. որ ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի անսարքությունն արդեն իսկ վերացված է. ատոմակայանի աշխատանքային ռիթմը վերականգնված:

Տեղացած ձյունն անշուշտ. անախորժություններ դատճառեց նաեւ քաղաքային տրանսդորտի վարորդներին եւ քաղաքացիներին: Ինչդես եւ վայել է բոլոր ժամանակներում ձմեռային տեղումներին մշտապես անդատրաստ քաղաքային տնտեսությանը. քաղաքի ամենատարբեր մասերում նկատվեցին փոխադրամիջոցների եւ ձնառաս տարածքները ոտքով հաղթահարող քաղաքացիների կուտակումներ: Մասնավոր ավտոբուսների որոշ վարորդներ չհաղաղեցին օգտագործելու հարմար առիթը եւ. մի շարք երթուղիներում (օրինակ Նորքի զանգված-երիտասարդական մետրո) կրկնակի ավելացրին ուղեվարձը ուղեւորներին տեղափոխում էին 100 դրամով: Պետք է ենթադրել. որ համադասասխանաբար բարձրացել է միկրոավտոբուսների ուղեվարձը: Հուսանք. որ օրինակը չի ոգեւորի ավտոբուսների դրակաս օդերեւութիվ վարորդներին եւ բարձրացած ուղեվարձի վերաբերյալ մեր տեղեկատվությունը ուղեւորին «խեղդելու» ազդակ չի ծառայի մյուսների համար:

Լ. Պ.

ՀԱՄԱՌՈՏ

«Իկարուսի» վթարից տուժել է 5 ուղեւոր

ԵՐԵՎԱՆ. 5 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ Հանրաքվեությունում տեղացող առաս ձյան հետեւանքով դժվարանցանելի են դարձել ավտոմայրուղիները: Փետրվարի 4-ին. առավոտյան 7-ն անց կեսին. «Իկարուս» մակնիշի ավտոբուսը Վանաձոր-Ալավերդի ճանադարհի 20-րդ կիլոմետրում շուռ է եկել եւ ընկել գետը. որի հետեւանքով 5 ուղեւոր մարմնական վնասվածքներ են ստացել ու տեղափոխվել հիվանդանոց: Վթարի դատճառը. ինչդես ասացին ՆԳ եւ ԱԱ նախարարության հասարակական կապերի եւ լրատվության վարչությունում. մեքենայի արգելակման համակարգի խափանումն է: Կատարվում է նախաքննություն:

Լեռնային շրջաններում ձյուածածկը՝ մեկ մետր

ԵՐԵՎԱՆ. 5 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ Ինչդես ասաց ՀՀ հիդրոօդերեւութաբանության վարչության դետ Գենադի Կոջոյանը. լեռնային շրջաններում ձնածածկը հասել է ավելի քան մեկ մետրի. իսկ Արարատյան դաշտում դահդանվում է 20-30 սանտիմետր մակարդակի վրա: Վարչության դեկավարի խոսքերով. ձյան առաս տեղումները հանրաքվեության տարածքի վրայով անցած ցիկլոնի ներգործության հետեւանքն են: Մոտ ժամանակներս սպասվում է. որ եղանակը որոշ չափով կդարձի:

Երկաթուղի՝ Գյումրի-Ալավերդի

ԵՐԵՎԱՆ. 5 ՓԵՏՐՎԱՐ. ՓԱՍՏ Գյումրի-Ալավերդի երկաթուղագծի վերականգնման աշխատանքներ կսկսվեն մարտ ամսվանից: Հայաստանի երկաթուղիների գլխավոր տնօրեն Ռաֆայել Ղազարյանի խոսքերով. գծի վերականգնման աշխատանքներ կատարվելու են Ալավերդի-Դարաքիլիսա հատվածում: Ինչդես հայտնեցին ՀՀ ՊՆ դրեսսդարանից. գծի վերականգնման աշխատանքներին դատրաստ են մասնակցելու դարապարտադիր զորակոչիկներ: Գծի վերականգնման աշխատանքներին մասնակցելու դատրաստակամություն հայտնել է նաեւ Ռուսական երկաթուղիների ընկերությունը:

Անկախ թոշակից թոշակառուները դետք է վճարեն

ԵՐԵՎԱՆ. 5 ՓԵՏՐՎԱՐ. ՓԱՍՏ Անկախ այն հանգամանքից. թե թոշակառուները երբ են ստացել անցած ամիսներին չվճարված կենսաթոշակները. դարտավոր են հունվարի 1-ից օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց վճարել նոր սակագներով: Համաձայն ՀՀ էներգետիկայի նախարարության տեղեկատվության. թոշակների ժամանակին չվճարման մասին դետք է մտածի սոցադ նախարարությունը: Ըստ տեղեկատվության. միայնակ թոշակառուների էլեկտրաէներգիայի դիմաց 50 տոկոս զեղչով վճարելուց բացի. կենսաթոշակառուները այս առումով այլ արտոնություն չունեն:

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ

Մի շենքի դատմություն

որ ներառում է կրքեր բնակարանամուտից առաջ կամ դրա փոխարեն

Ընտանիքիդ բնականոն կյանքն ապահովելու համար դիտի ունենաս ամենաքիչը երկու բան. բնակարան եւ աշխատանք: Որքան էլ չուզենանք ասել ու կրկնել. ութսունութի չարաղեռ երկրաշարժի գոտում հազար-հազարները զրկված են այդ երկուսից էլ արդեն ութ տարի: Ով. փառք Աստծո. չի եղել նման վիճակում. երբեք լիարժեք չի դատկերացնի. թե դա ինչ կարող է նշանակել. նամանավանդ հիմա: Չգիտեմ գոնե վիճակագիրները կարո՞ղ են դույզն-ինչ դատկերացում տալ այդ դաշտառով մինչեւ այժմ բեկվող ճակատագրերի. դժբախտացող ընտանիքների թվի մասին: Դժվար թե... Եվ ընդհակառակը. ի՞նչ անհամեմատելի ուրախություն է այսքան տարիների տառապանքից ու տագնապներից հետո նորից բնակարան ստանալը. գլխի վերեւ վերջապես սեփական ծածկ ունենալը: Եթե. իհարկե. ստանում ես: Եվ եթե այդ ուրախությանդ մի նոր չար անակնկալ չի խառնվում...

Ախուրյանի նախկին շրջկենտրոնի թիվ 20 քառահարկ. 30 բնակարանով շենքը շահագործման հանձնվել եւ բնակեցվել էր 1987-ի երկրորդ կեսին: Բնակիչների մեծ մասը երիտասարդ ընտանիքներ էին. որոնք սկսել էին ադրել ինքնուրույն կյանքի առաջին հաճելի հոգսերով ու ուրախություններով. ինքնահաստատվել: 88-ի երկրաշարժը... չփլուզվեց այս շենքը. բայց մի քիչ վթարային դարձավ: Բնակիչները շենքից դուրս եկան. շատերը շուտով վագոն-տնակներ ստացան. ոմանք էլ. այդ հնարավորությունը մտովի զիջելով բոլորովին դրսում մնացած ընտանիքներին. դատսդարված մնացին հարգաս-բարեկամների տանը. այլ ժամանակավոր կացարաններում: Մտածում էին. որ եթե ամբողջ աղետի գոտին երկու տարում դիտի վերակառուցվի նոր շենքերով. ապա դատսրաստի շենքերն ամրացնելն ու այդքան ընտանիքներ նորից տնավորելը ամիսների հարց է... Բայց օրը օրին գումարվելով՝ տարիներ էին դառնում. իսկ շենքին մոտ եկող չկար: Դրսից օգնության եկած շինարարները քար ու քոքի մեջ. ամայի մի վայրում Նոր Ախուրյան էին հիմնում. հարյուրավոր շինարարական հիմքեր էին գցում (դրանց երեւի մեծ մասն այդդես էլ լցված մնում է մինչեւ այսօր). մինչդեռ քաղաքին կոչած հին շրջկենտրոնի եւ այնտեղ կանգուն մնացած մի քանի բնակելիների ճակատագիրը մնում էր անհայտ:

Մոտավորապես երեք տարի հետո լույսի շող ծագեց. երբ տեղի շինարարներ եկան. շենքի առջեւ աշտարակավոր կռունկ կանգնեցրին ու սկսեցին աշխատել: Բավականին կարճ ժամանակում հեռացրին շենքի տանիքը. չորրորդ հարկը (փոխարենը բնակելի էր դարձվելու նախկինում ոչ բնակելի առաջին հարկը). շենքն ավելորդ ամեն ինչից ազատելով լրիվ դատսրաստեցին ամրացման... ու հեռացան:

Հետագա տարիներին հուսավառվելու սակավադեդ առիթներ թեւեւ էլի եղան. բայց դա հետզհետե նվազող հույս էր: Այդ ընթացքում մի երկու անգամ գործը շատ փչ առաջ գնաց. փոխարենը գնալով նորից աճեց անորոշությունը: Երկրաշարժին արդեն յոթերորդ տարին էր հաջորդել. նախկին բնակիչներն այլեւս երիտասարդ ընտանիքներ չէին. իսկ շենքի հեռանկարն ի վերջո դատված էր հուսահատեցնող խոր մռայլով... Բնակիչներից մի քանիսն այդ ընթացքում շենքից հրաժարվելով՝ կարողացել էին տուն կառուցել կամ մի այլ կերդ գլխների ծարը տեսնել: Բայց դա քչերն էին:

Եվ ահա. 1995-ի մոտավորապես գարնանը այս շենքի ամրացումը մտցվեց Համաշխարհային բանկի ծրագրի մեջ: Վերջապես շենքի ապագան փրկված էր: Շինարարական աշխատանքներն արագ վերսկսվեցին. օբյեկտի հանձնման ժամկետ նշանակվեց հոկտեմբերը... Բայց նույնիսկ այս ամենից հետո բնակիչներին նոր փորձություններ էին սպասում: Նախ դարզվեց. որ ամրացման ընթացքում մի շարք բնակարաններում դակասեցվում է սենյակների քանակը. ինչը նոր խնդիրներ կարող էր առաջ բերել դրանց բաշխման հարցում: Ապա կատարվեց Համաշխարհային բանկի դարագայում անսդասելին. թափով առաջ գնացած շինարարությունը ոչ միայն նախատեսված ժամկետում կամ մի փոքր ուշ ավարտ չհասցվեց. այլեւ այդ ժամկետից որոշ ժամանակ անց նորից կանգ առավ. շենքի փողերը... ուրիշ տեղ ծախսվեցին: Եվ վերջապես. Ախուրյանի շրջխորհրդի գործկոմը նույն տարվա սեդտեմբերին բաշխեց դեռ ամրացվող եւ շինաշխատանքների գոնե ավարտական փուլին չհասցված շենքի բնակարանները (եւ նույնիսկ օդդերավորումը)... ու բաշխեց այնդես. որ սառը ջուր լցրեց շենքի բնակիչների մի զգալի մասի այդքան տարիների սդասումների եւ հույսերի վրա: Տարբեր չհիմնավորված դատճառաբանություններով բնակարան չհատկացվեցին նախկին բնակիչներ Ելենա Մանուկյանի. Սերյոժա Ալոյանի. Վլադիմիր Մարգարյանի. Անտոն Ասոյանի ընտանիքներին (վերջինին՝ հետագայում կից կառույցից բնակարան տրվեց): Ռոբերտ Ալեքսանյանի 7 անձից բաղկացած ընտանիքը բաշխման ցուցակում ներկայացվեց որդես 5 անձ եւ «արժանացավ» 2 սենյականոցի: Հոգ տանելով 4 անձից կազմված հինգ ընտանիքներից չորսին 3 սենյականոցներով ապահովելու մասին. եւ դեռ մեկական 3 սենյականոց բնակարան էլ «նվիրելով» մի դեդոում երեք անձից կազմված. մեկ այլ դեդոում ընդհանրապես տվյալ շենքի հետ կապ չունեցող ընտանիքի. գործկոմը 5 անձից բաղկացած վեց ընտանիքներից չորսին (այդ թվում. ասելն անհամեստ չլինի. տողերիս հեղինակի երեք անչափահաս ունեցող ընտանիքին) համեստորեն «բավարարեց» 2 սենյականոց բնակարաններով... Շենքի վարձակալների հարցերը չլուծած. 27 բնակարանից 7-ը. այդ թվում՝ նախկին 6-ի փոխարեն այժմ մնացած երկու 4 սենյականոցներից մեկը. հատկացվեց նախկինում այս շենքի բնակիչ չհանդիսացող ընտանիքների: Տերն իրենք էին. բակլան խաբած էին ցանում: Չհարգվեց նույնիսկ Ախուրյանի ժողդասարանի գրությունը՝ Վլադիմիր Մարգարյանի նախկին բնակարանն առայժմ չհատկացնել որեւէ մեկին. մինչեւ դատական կարգով վիճելի հարցի լուծումը. եւ այդ բնակարանը տրվեց ուրիշի:

Նշված փաստերի մեծ մասը բերում ենք բնակիչների բողոքների հիման վրա եւ ժողդասարանի խնդրանքով այս շենքի բաշխման օրինականությունը ստուգած Ախուրյանի դատախազության հանձնաժողովի 30.04.1996 թ. ակտից. որը հետագայում ուղարկվել է արդեն Շիրակի մարզդետարան: Հետո այստեղ է ուղարկվել նաեւ Վլադիմիր Մարգարյանի բնակարանն իրեն վերադարձնելու մասին դատարանի վճիռը: Բայց ահա Վ. Մարգարյանը. անցյալ տարվա նոյեմբերի 30-ին անձամբ գրավոր դիմում հանձնելով Շիրակ այցելած ՀՀ վարչադետ Արմեն Սարգսյանին. որի ազնիվ արձագանքն. ի դեդ. չի ուշացել. դրանում բողոք է հայտնել. որ այդ փաստաթղթերից ոչ մեկին մարզդետարանում դատշաճ ընթացք չի տրվել:

... Սակայն. ինչդես ասում են. ամեն բանի վերջն է գեղեցիկ: Դեկտեմբերի վերջերին. երբ շենքի վերսկսված ամրացումը վերջապես ավարտին մոտ էր. մարզդետարանն այնուամենայնիվ որոշեց հանձնումից հետո (ինչդես սովորաբար կարգն է) իր հանձնաժողովով նոր բաշխում կատարել: Մարզդետարանի բնակարանային-կոմունալ տնտեսության բաժնի վարիչ դրն Յուրի Հովհաննիսյանը. որի հետ դեռ այն ժամանակ զրուցեցինք. ասաց. որ բաշխումը կկատարվի Համաշխարհային բանկի սահմանած նոր կարգի (խոսքը վերաբերում է բնակիչներին ֆինանսապես դատարավորեցնող դայմանագրերի կնքմանը...) եւ «Աղետի գոտում երկրաշարժի հետեւանքով վթարային դարձած եւ դեպական միջոցների հաշվին ամրացված շենքերի բնակարանների բնակեցման մասին» ՀՀ կառավարության 1995 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 116 որոշման հիման վրա. դատշաճանելով վարձակալների շահերը: Այժմ շենքը դատրաստ է շահագործման. իսկ բաշխումը սդասվում է օրերս: Կարծում ենք. Շիրակի մարզդետարանը սրանով հրաշալի առիթ ունի ցույց տալու. որ որդես դետական կառավարման մարմին դատշաճ է քաղաքացիների ոտնահարված իրավունքների. օրինականության եւ արդարության

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ.
Ախուրյան-Գյումրի

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Եղերական

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դարձյալ Խորեն Ա կաթողիկոսի սպանության մասին

Գաղտնիք չէ, որ Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի կենսագրության մեջ հատկապես նրա գահակալության վերջին տարիներին, սպիտակ բծեր կան, որոնք, բնական է, Հայ եկեղեցուց հեռու կանգնած մարդկանց մեջ առաջացնում են խորհրդածություններ եւ ենթադրություններ, դրանք, սակայն, ոչնչով չեն ոչնչացվում եւ մեկ անգամ հս վկայում են հեղինակների անտեղյակության մասին: Այդ են՝ թաղրությունների հիմքում ընկած է մեկ հարց. արդյո՞ք սպանել են Խորեն Ա կաթողիկոսին: Հենց սկզբից ասենք, որ նման հարցադրման ժամանակը շատ վաղուց է անցել: Այսօր դա նշանակում է խաչ քաշել հայ հոգեւորականության անմեղ զոհերի, այդ թվում մեծ հայրենասեր կաթողիկոս Խորեն Ա-ի հիշատակի վրա: Ինչպիսի միամտություն, անտեղյակություն: Չնկայի արխիվներում չկան փաստաթղթեր, որոնք հաստատեին կաթողիկոսի ահաբեկչական սպանությունը: Մի՞թե կարելի է այսօրինակ դրիմիտիվիզմը...

Վերջերս, կաթողիկոսի վերաբերման առնչությամբ, որոշ դարբերականներ անդրադարձան նրա կյանքին ու գործունեությանը: «Հայք» թերթը 1996 թ. սեպտեմբերի 4-ին հրապարակեց Վ. Առաքելյանի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյան», իսկ «Առավոտը» (1996 թ. սեպտեմբերի 17) Գ. Մարտոյանի «Իրականում սպանե՞լ են արդյոք կաթողիկոս Խորեն Առաջինին» հոդվածները: Այս երկու հրապարակումներն էլ հեռու են դրական ճշմարտությունից: 1996 թ. սեպտեմբերի 20-ին «Ազգում» լույս տեսավ Ա. Մանուկյանի «Կրկին Խորեն Ա կաթողիկոսի մահվան առեղծվածի մասին» հոդվածը: Իհարկե, դրական է, երբ տվյալ բնույթի հրապարակումների հեղինակները ոգեսանվանգության համակարգի աշխատողներ են: Սակայն մեկ բան է, երբ խոսքը վերաբերում է մամուլում հրապարակված բոնադատվածների ցուցակին, եւ բոլորովին այլ բան, երբ տվյալ հեղինակը փորձում է ինչպիսի մի ամբողջ գործ ընթերցողին ներկայացնել զուտ սեփական կարծիքով: Այստեղ հնարավոր չէ բավարարվել սոսկ ոգեսանվանգության արխիվում պահպանված նյութերով: Ոչ միայն անհրաժեշտ, այլեւ պարտադիր է ուսումնասիրել ՀՀ մյուս արխիվներում եւ Մատենադարանում գտնվող նյութերը: Ահա թե ինչու ցավալի սխալ է տպրդել «Առեւտուր» թերթում (1995 թ., հմ 14) Ա. Մանուկյանի «Հայ առաքելական եկեղեցին 1930-1938 թթ.» հոդվածում: Հայ առաքելական եկեղեցու ճանաչված երկու գործիչների Ատրպատականի թեմի հոգեւոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին եւ Եվրոպայում հայրապետական նվիրակ, հեսագայում Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին, չիմանալով, որ դրանք երկու տարբեր մարդիկ են, Ա. Մանուկյանը հիշատակում է իբրեւ մեկ մարդու Թորգոմ արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան:

Ա. Մանուկյանի հոդվածը («Կրկին Խորեն Ա կաթողիկոսի մահվան առեղծվածի մասին») զգաստացնում է այն իմաստով, որ հեղինակը հենվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, իրավագիտության դոկտոր Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյանի «ստեղծագործության» վրա անտեղյակ լինելով, որ այդ նույն «արքազանը» միաժամանակ եղել է խորհրդային ոգեսանվանգության փորձված վարձու գործակալը:

Հայաստանի խորհրդայնացվելուց հետո, 1921 թ. փետրվարին, Հայաստան Ա. Ղլտճյանին եւ Վանի իմքնաղաբեռդանական մարտերի եւ Սարդարապատի ճակատամարտի մասնակից, Աղթամարի մենաստանի վերջին վանահայր Դանիել վարդապետ Զաղոյանին ձերբակալեց: Հենց այդ օրերից էլ Ղլտճյանն սկսեց համագործակցել Հայաստանի հետ...

1930 թ. Բեռլինում լույս տեսած Գ. Աղաբեկովի «Պետական քաղաքական վարչություն-չեկիստի գրառումներ» գրքում (այս անձնավորությունը եղել է Միացյալ ոգեսական քաղաքական վարչության արտասահմանյան բաժնի արեւելյան բաժանմունքի ոգեսը, 1928-30 թթ. ՄՊՔՎ-ի ռեզիդենտը Մերձավոր Արեւելքում, 1930 թ. աղաստանել է արտասահմանում) հայ հոգեւորականությանը նվիրված գլխում նշում է, թե ինչպես 20-ական թվականների վերջերին խորհրդային հետախուզությունը ձգտում էր ուժեղացնել իր գործակալական ցանցը Մերձավոր Արեւելքում եւ գործում էր Հայ եկեղեցու բողի ներքո: Հեղինակը մասնավորապես գրում է. «Պետքաղվարչությունը մտադիր էր փոխարինել Սրբազան թեմական առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանին եւ Թավրիզի թեմական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին մեկ ուրիշով, որը կկարողանար շարունակել իրենց գիծը, բայց որին կարելի լիներ օգտագործել որպես ծածկույթ Հնդկաստանում հետախուզական աշխատանք կազմակերպելու համար:

ՊՔՎ-ի արտասահմանյան բաժնում շատ երկար էին մտածում բավրիզյան եւ հնդկական խնդիրների լուծման վրա, եւ վերջապես ելքը գտնվեց: Ֆրանսիայում բնակվում էր հովվապես Ղլտճյանը, որը երկու տարի շարունակ ՊՔՎ-ի գործակալն էր Գ/58 համարանիշով: Ապահովված լինելով ճանապարհածախսով, Ղլտճյանը 1928 թ. վերջին ժամանեց Մոսկվա, եւ ես ընդունեցի նրան: Բացատրեցի նրան, թե բանն ինչ է: Ի պատասխան Ղլտճյանն առաջարկեց հետեւյալ ծրագիրը, ինքը կմեկնի Երեւան կաթողիկոսի մոտ, իսկ վերջինս էլ ՊՔՎ-ի ճնշման տակ իրեն եպիսկոպոս կձեռնադրի, իսկ ապա աշխատանքի կուղարկի որպես իր ներկայացուցիչը Պարսկաստանում, ուր նախկինում բնակվել է եւ ուր պահպանվել են իր կապերը: Ղլտճյանը երդվում էր, որ սանանալով նշանակում Պարսկաստան, կկարողանա հասնել այն բանին, որ Ներսես եպիսկոպոսը հեռացվի Թավրիզից, որի փոխարեն հնարավոր կլինի Սրբազանից փոխադրել Մեսրոպ եպիսկոպոսին, իսկ ինքը Ղլտճյանը կգրավի Պարսկա-հնդկական թեմի առաջնորդի դաշտոնը: Եվ այնժամ ՊՔՎ-ի գործակալության ստեղծումը Հնդկաստանում կարելի կլինի համարել ապահովված... Վերջին տեղեկությունների համաձայն, Ղլտճյանը կատարեց ծրագրի առաջին մասը ձեռք բերեց արքեպիսկոպոսի աստիճան եւ այժմ Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչն է Թեհրանում: Տեսնենք, թե ինչ է անելու առաջիկայում»: Այնպես որ հոդվածագիր Ա. Մանուկյանը կաթողիկոսի եղերական մահը սովորական-բնական ներկայացնելու համար հանձին Ա. Ղլտճյանի անհաջող փաստաբան է ընտրել: Կարո՞ղ էր արդյոք չեկայի գործակալը չեկայի կանխակալ կարծիքին հակադրվել... Էլ ի՞նչ գործակալ, եթե չի կրկնում «բալմուտը», եւ Ղլտճյանը ոլիտի թե գրավոր եւ թե բանավոր ապացուցեր «հանգուցյալի մահն առաջացել է ուրի կաթվածից»: Խորեն կաթողիկոսը մահացել է 1938 թ. ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը: Ա. Մանուկյանի հոդվածում կարդում ենք. «Կաթողիկոսի մահվան հաջորդ օրը 1938 թ. ապրիլի 6-ին, Արսեն արքեպիսկոպոսը զեկուցագիր է ուղարկում Ս. Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդին...»: Ապա «Փաստը մնում է փաստ, որ կաթողիկոսի մահվան հաջորդ օրն իսկ կատարվել է դիազննություն, եւ Արսեն արքեպիսկոպոսը վկայում է, որ Խորեն Ա-ն «խստորեն զանգատվում էր իր ուրի անկանոն գործունեությունից»: Հարց է առաջանում՝ ի՞նչ է նշանակում «կաթողիկոսի մահվան հաջորդ օրը»: Այսինքն ապրիլի 7-ի՞ն... Ստացվում է, որ Ղլտճյանը Գերագույն հոգեւոր խորհրդին երկու նամակ է գրել, մեկը ապրիլի 6-ին, մյուսը ապրիլի 7-ին դիազննությունից հետո: Չէ՞ որ, ինչպես վկայում է Ղլտճյանը, ապրիլի 6-ին արդեն ինքը զեկուցագիր է ուղարկել Գերագույն հոգեւոր խորհրդին հենց այդ զեկուցագրում էլ հիշատակելով դիազննության փաստը: Բայց չէ՞ որ դիազննությունը կատարվել է ապրիլի 7-ին: Այստեղ ոլեսք է դարզել, թե ո՞վ է ստում եւ ինչի՞ համար: Ղլտճյանը դիազննությունը շփոթել է անդամահատության հետ, կաբվից դուրս գալով «ապացուցում է», թե «հանգուցյալը վերջին տասն օրվա ընթացքում նամանավանդ խստորեն զանգատվում էր իր ուրի անկանոն գործունեությունից, սակայն միշտ հրաժարվում էր բժշկական օգնության դիմելուց եւ մեզ հանգստացնում էր. «Ցավերն անցողական են, քանի որ այլ անգամներ էլ են դրսեւորվել»: Ո՞վ կհավատա, որ այս սառն ու անհոգի «փաստարկված ու դրսեւորված» տողերը գրվել են կաթողիկոսի մահվանից ընդամենը մի քանի ժամ հետո: Ի՞նչ է նշանակում, թե կաթողիկոսը «միշտ հրաժարվում էր բժշկական օգնության դիմելուց»: Ընդունենք, թե կաթողիկոսը, իսկապես հրաժարվում էր բժշկական օգնությունից եւ հավատում էր, թե «ցավերն անցողական են»: Այս դեպքում Ղլտճյանին ոլեսք է մեղադրել կաթողիկոսի առողջության հանդեպ ցուցաբերած հանցավոր անտարբերության մեջ: Իմանալով, որ «վերջին տասն օրվա ընթացքում նամանավանդ խստորեն զանգատվում էր ուրի անկանոն գործունեությունից», արքեպիսկոպոսը «հիվանդ» կաթողիկոսի կարծիքը հաշվի չի առել, բժիշկ չի հրավիրել, ոչ մի միջոց չի ձեռնարկել... ուրեմն էլ ինչո՞ւ է որպես Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ մասնակցում դիազննությանը, գուցե դրված «փորձի» արդյունքը ստուգելու համա՞ր: Վերջապես 20-րդ դարում վախճանված մեր ո՞ր կաթողիկոսին են դիազննել: Եթե Խորեն կաթողիկոսը անընդհատ բողոքել է ուրի «անբավարարությունից», ուրեմն պարզ էր հիվանդությունը, ոլիտի վախճանվեր ուրի նողայից: Էլ ինչի՞ էր ոլեսք դիազննությունը: Ում եւ ինչ էին ապացուցում: Իրականում ապացուցելու եւ հերքելու շատ բան կար, որովհետեւ կաթողիկոսի մարմնի վրա եղած հետքերը հնարավոր չէր թաքցնել: Իսկ մենք գիտենք, թե չեկիստներն ինչպես էին վարվում անցանկալի տեղեկություններ եւ փաստեր իմացողների հետ: Բայց ո՞վ ոլիտի «ապացուցեր» կաթողիկոսի մահվան իսկական դրսեւորումները... Այդպիսի մեկը արքեպիսկոպոս Ղլտճյանն էր, անվտանգության մարմինների գործակալը, որը եւ, ինչպես տեսնում ենք, այնպես է «ապացուցել», որ մինչեւ օրս միամիտ մարդիկ խոր ջիրոի մեջ են...

Բայց դառնանք հոդվածի այն մասին, որ խոսվում է կաթողիկոսի շարիր Գեղամ Կլեկչյանի մասին: «Հայրենի եզերք» ամսագրի 1991 թ. թիվ 7-ում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի նախկին առաջնորդ Պարգեւ Գեւորգյանն իր «Ինչ եղավ քեզ, մարդ Աստծո» հոդվածում գրել է. «1938 թ. ապրիլի 4-ի երեկոյան, երբ Վեհարանին կից գտնվող պարտեզում ծառերի չորացած ճյուղերն էի հավաքում,- պատմել է շարիր Գեղամը,- ինձ մոտեցան երկու անծանոթ մարդ ուղեկցությամբ Փիրուզ անունով մի կնոջ, որ քաղաքի Հայաստի վարիչն էր, եւ, մինչեւ այդ ոչ մի անգամ չէր եղել կաթողիկոսարանում: Սրանցից տարիքավորը հրամայական տոնով ասաց ինձ, թող վեհարանը, գնա քաղաքում ապրիր: Վեհափառին մենակ թողնել չեմ կարող, եղավ պատասխանը: Ավել-պակաս դուրս մի տուր,- ձայնը բարձրացրեց ինձ հետ խոսողը,- ի՞նչ է, կրակի հետ ես ուզում խաղալ, որ ասում եմ գնա, ուրեմն պետք է գնաս, չհամարձակվես մեր այստեղ գալու, ինչպես եւ քո վեհարանից հեռանալու մասին որեւէ խոսք ասել կաթողիկոսին:

Իջա Մաստեւոս հայր սուրբի մոտ: Նա էլ ինձ ասաց, որ նույն մարդիկ իրեն կարգադրել են կաթողիկոսի մոտ չգնալ:

Ժամանակավորապես բնակվեցի քաղաքում: Դեռ մեկ օր էլ չէր անցել, որ լուր տարածվեց, թե կաթողիկոսը մահացել է. Այդ որ լսեցի, ոտքերս թուլացան, մի կերպ հասա վեհարան, մտա Վեհի ննջարանը, տեսա նրան անկողնում մեռած. Մաստեւոս վարդապետն էլ գլուխը դրած կաթողիկոսի կրծքին, ոչ տրամադրվայել հեծեծանքով ողբում էր նրա մահը:

...Վեհափառին բուժող բժիշկ Հայկ Եղիազարյանը, որ դպատահաբար լսելով Վեհափառի մահը, Երեւանից եկել էր Մայր Աթոռ, ուշադրությամբ նայեց հանգուցյալին, կատարեց հարկ եղած քննությունը եւ հառաչելով, ցածր ձայնով ասաց. «Կասկած չկա, կաթողիկոսին խեղդել են»: Կաթողիկոսի սպանությունից հետո Մաստեւոս վարչապետ Ծովյանցը Էջմիածնից մեկնեց Նոր Բայազետի Ագրիվանքի եկեղեցին, իսկ շուտով ընդհանրապես անհետացավ: Պետանվտանգության քննիչների որոնումները ոչ մի արդյունք չտվեցին»:

Սրանք վկայություններ են, որոնց կողքով անտարբեր անցնել չես կարող: Բայց, ահա, իր հոդվածում Ա. Մանուկյանը փաստեր է բերում, որոնք քաղված լինելով ԱԱՆ արխիվից, հավաս չեն ներշնչում: Դրանք նպատակ ունեն հերքելու Պարգեւ եպս. Գեւորգյանի հոդվածում եղած Գ. Կլեկչյանի վկայությունները եւ առաջ քաշում նոր վարկած, թե 1938 թ. մարտի 29-ին Գեղամ Կլեկչյանը արդեն բանտարկված էր, հետեւապես չէր կարող ներկա լինել ապրիլյան իրադարձություններին: Ձերբակալված Կլեկչյանի անկետան լրացվել է մարտի 31-ին, մեղադրական եզրակացությունը կազմվել է ապրիլի 11-ին, հարցաքննվել է ապրիլի 16-ին: Չեկայի այն ժամանակների անշուշտ տգեղ եւ անսահման դաժան քննիչը կեղծիքներ կատարելիս մոռացել է, որ այսօրվա հետազոտողների համար անհրաժեշտ հետքեր է թողնում... նրա գրանցած ամսաթվերի «խաղը» բացում է հանելուկներից մեկը. նա գրել է, թե սկզբից մեղադրական եզրակացություն է կազմվել (ապրիլի 11), իսկ 16-ին կալանավորը հարցաքննվել է: Արդյոք նման բան կարո՞ղ էր լինել: Հայտնի է, որ սկզբից մեղադրանք են առաջադրում, ապա հարցաքննում, իսկ վերջում կազմում մեղադրական եզրակացությունը: Հակառակն անելը հանցագործություն է: Ինչպե՞ս կարելի է հավատալ չեկայում թխված գործերին, չէ՞ որ այնտեղ ամեն ինչ արվել է հատուկ նպատակով, մանավանդ եթե այն կազմված է Խորեն Ա կաթողիկոսի անվան հետ: Ա. Մանուկյանը քաջ գիտեր, որ չեկան կաթողիկոսին հետապնդել է նրա ընտրության առաջին օրերից մինչեւ մահը եւ նույնիսկ... մահից հետո, թույլ չտալով բազմամարդ թաղում կազմակերպել եւ հուղարկավորել նրան վանքի բակում: Մի՞թե կարելի է անտեսել այն հոգեւորական-կալանավորների հարցաքննությունների արձանագրությունները, որոնցում չեկայի անհոգի քննիչները եկեղեցու ծառաներին ծեծի ու խոշտանգումների միջոցով ստիպում էին «խոստովանել», թե Խորեն կաթողիկոսը «դաշնակցական է, հակախորհրդային տարր»: Վաթսուն տարի անց, չեկայի արխիվում «մեղմացուցիչ դեղ» հանցանա՞գ» են որոնում ինչ-որ մարդկանց արդարացնելու համար: Գուցե ա՞յդ է որոշ դատմաթանների նպատակը: Զարմանալի է, որ նրանք էլ չեն ժխտում, թե երեսնականներին, այո, կարող էին սպանել կաթողիկոսին, բայց... քանի որ հայտնի չէ, թե ով է ահաբեկչական սպանության հեղինակը, որեմն... սպանություն տեղի չի ունեցել: «Հայաստանում, գրում է Ա. Մանուկյանը, 1930-ական թվերին ու հատկապես 1937-38 թթ. տիրող ճնշող քաղաքական մթնոլորտը անշուշտ իր բացասական ազդեցությունը թողել էր ազգասեր, հայրենասեր կաթողիկոսի առողջության վրա...»: Այդպիսով, ակամա, հոդվածագիրը կրկնում է չեկայի կողմից շրջանառության մեջ դրված վարկածը, կաթողիկոսը մահացել է ուրի կաթվածից: Բայց տեղյա՞կ է հոդվածագիրը, թե ինչ է գրում Խորեն Ա կաթողիկոսի ավագ քրոջ թոռնուհին Անահիտ Օքուզյանը «Առավոտ» թերթի 1996 թ. հոկտեմբերի 3-ի համարում. «Սաբենիկ տատս եղբոր մոտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում է եղել նրա ողբերգական մահվանից մեկ շաբաթ առաջ եւ տուն վերադառնալուց հետո ոչինչ չէր ասել Սաբա քեռու (այդպես էի ես սիրալիր անվանում նրան մեր ընտանիքում) հիվանդության մասին»: Սա է ճշմարտությունը, որ մնացել է դեռեւս կենդանի մարդկանց հիշողություններում, մամուլում հրապարակված նրանց հուշերում եւ ոչ թե ստալինյան չեկայի կեղծիքներով լի արխիվներում: Հոդվածագրի փոխարեն ես կարող պատասխանել, թե ի՞նչ է նշանակում «պատշաճ չէ» կաթողիկոսի սպանության հետ կապված փաստի առթիվ «մեղադրել որոշակի մարդկանց» եւ որ «նման մոտեցումը կարող է հանգեցնել տխուր հետեւանքների» արտահայտությունները: Չգիտեմ նաեւ, թե ո՞ւմ նկատի ունի Ա. Մանուկյանը: Եթե ակնարկը ինձ է ուղղված, որպես «Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնատիրության օրոք» գրքի հեղինակի, ապա կարող եմ ասել, որ սպանության փաստի հետ կապված ոչ մեկի չեմ մեղադրել եւ միտք էլ չունեմ նման բան անելու: Ես օգտվել եմ գրականության մեջ եղած փաստերից եւ ոչ ավելի: Ինչ վերաբերում է «տխուր հետեւանքներին», ապա կարող եմ հաստատապես պնդել, որ հիրավի, շատ տխուր կլինի հայ դատմագրության համար, եթե առկա փաստերը ամբողջապես չհրապարակենք:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ,
Պատմական գիտությունների թեկնածու

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Նացիստ ոճրագործների եւ նրանց հովանավորների «մարդառուը» շարունակվում է: Նրանց համար չկա ներում, ինչքան էլ ժամանակ անցնի:

Նացիստներին համակրող միջազգային ցանցը, որ հազարավոր ոճրագործ գերմանացիների օգնեց երկրորդ աշխարհամարտից հետո փախչել Հարավային Ամերիկա, դատապարտվում է «դավաճանության շրջագիծ»: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու եւ մի շարք պետությունների կառավարությունների դեղմամբ Յոզեֆ Մենգելեի նման նացիստ ոճրագործները Վատիկանից կամ Կարմիր խաչից անձնագրեր ստանալով, Իտալիայի վրայով անցան Բուենոս Այրես, որտեղ իրենց համար հանգիստ աղաստան գտան: Պատմաբանները վաղուց հավաստած էին, որ Արգենտինայի նախագահ Խուան Պերոնն ակտիվ մասնակցություն է ունեցել ոճրագործների տեղափոխման այդ ծրագրում: Ըստ «Նյուզուիք» հանդեսի փետրվարի 3-ի համարի տվյալների, Պերոնի կառավարության անդամներից մեկն անցյալ շաբաթ նոր փաստարկներով հաստատել է դատապարտների այդ կասկածները: Նրա ընդդիմներով, Պերոնի վարչակարգը 1945 թվին գաղտնի Եվրոպա է տեղափոխել արգենտինյան չլրացված անձնագրեր եւ ինքնության քարտեր, որպեսզի փախչել ցանկացողները օգտվեն դրանցից:

Այս փաստարկները էլ ավելի են մեծացնում Արգենտինայի «հանցավը» որպես «նացիստների դատապարտման» դեպքության: Դրանք հայտնի են դարձել նշանավոր իրավաբան Պետրո Բիանկիի շնորհիվ: Նա անցյալ տարի Իտալիայում դատապարտել է նախկին էսէսական գնդապետ Էրիկ Պրիբկեին, իսկ 1946-48 թվերին որպես կրտսեր դիվանագետ ծառայել է Արգենտինայի արտգործնախարարությունում: «Դա արտգործնախարարի կողմից ղեկավարված գաղտնի օպերացիա էր, բայց այնտեղ բոլորն էլ գիտեին, թե ինչ է կատարվում», հայտնել է նա «Նյուզուիքի» թղթակցին: Ըստ նրա տվյալների, երկու հազար արգենտինյան անձնագրեր եւ ութ հազար ինքնության քարտեր են դուրս գրվել դաշնակցային ոստիկանության կողմից եւ ուղարկվել Վիեննա դիվանագիտական ճանապարհով: Պատմաբանների կարծիքով, նացիստների տեխնոլոգիական հետազոտություններին եւ մուլտիմիլիոններին տիրապետելը կարող էր դրդապատճառ դառնալ Պերոնի համար: Բիանկիի փաստարկները այժմ ստուգվում են կառավարության կողմից Փարիզի Սիմոն Վիզենտալ կենտրոնի դատախազով:

Այդ հարցի վրա առավել լույս կարող է սփռել արդիլին հրատարակվելիք «Վկայության նախագիծը» գիրքը, որը երեք հեղինակների ուսումնասիրությունների արդյունք է: Նրանք չորս տարի շարունակ փորփրել են 22 հազար գաղտնի փաստաթղթեր, որոնք Արգենտինայի արտգործնախարարության արխիվներից դուրս են բերվել 1992-ին, այժմյան նախագահ Կառլոս Մենեմի հրամանագրով: Այդ փաստաթղթերը երեւան են հանում «համագործակցության ցանցը», որը գոյություն է ունեցել Բուենոս Այրեսում, Նեապոլում եւ Ժենեւում գտնվող արգենտինյան հյուպատոսարանների եւ դեսպանությունների միջոցով: Օրինակ, երբ Միացյալ Նահանգների պետքարտուղարությունը տեղեկանալով, որ նացիստական կուսակցության դարագլուխներից Մարտին Բորմանը գտնվում է «Պուսադասում Միսիոնես նահանգում», անմիջապես դիմեց Արգենտինային, իսկ վերջինս ֆեդերալ ոստիկանությանը հրահանգեց փնտրել հանցագործին «Պուսադասում Մենդոզա նահանգում»: Ոստիկանությունը, բնականաբար, արձագանքեց, որ «նման բաղաք գոյություն չունի», եւ որոնումները դադարեցվեցին: Պատահական սխալմո՞ւթ էր դա, թե՞ դիտավորություն: Պերոնի դարագան ուսումնասիրելով, կարելի է եզրակացնել, թե այս դեպքում երկրորդ վարկածն է դեր խաղացել:

«ՆՅՈՒԶՈՒԻՔ»

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Պերոնի հատուցման ժամը հասել է

ՇՐՋԱՆ

Չեչնիայի իշխանությունները կարող են հրաժարվել Ռուսաստանի «Տրանսնեֆտ» ընկերության ծառայություններից

Գրոզնու իշխանությունները կարող են հրաժարվել Ռուսաստանի «Տրանսնեֆտ» ընկերության միջնորդիչ ծառայություններից եւ Չեչնիայի տարածքով ադրբեջանական նավթի փոխադրման ուղղությամբ անմիջական համաձայնագիր կնքել Ադրբեջանի միջազգային կոնսորցիումի հետ: Այդ մասին հանդիսատեսից հարցազրույցի ժամանակ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է հանրապետությունում գործող «ՅՈՒՆԿՈ» նավթաընկերության նախագահ Խոժ-Ահմեդ Յարիխանովը:

Ըստ նրա դնդման, «Չեչնիային նման որոշման է դդում Մոսկվան, որի դաշնային ներկայացուցիչները ավելի քան երկու ամսվա ընթացքում չեն կատարել անցյալ տարվա նոյեմբերի 23-ին Մոսկվայում Վիկտոր Չերնոմիրդինի եւ Ասլան Մասխադովի ստորագրած համաձայնագրի հիմնական կետերից մեկը»:

Այդ փաստաթղթին համաձայնության եկան, կողմերը դարձավորվում էին մինչեւ 1996 թ. դեկտեմբերի 1-ը առանձին համաձայնագիր կնքել Չեչնիայի Հանրապետության տարածքում նավթի հանույթի վերամշակման, փոխադրման, նավթամթերքների եւ գազի հարցերի շուրջ: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ռուսաստանի Դաշնության վառելիքի եւ էներգետիկայի նախարարությունում, Չեչնիայի տարածքով նավթի փոխադրման մասին դայմանագրի հիմնական դրույթները ներկայումս լրամշակվում են փոխադարձ խորհրդակցությունների ընթացքում: Սակայն բանակցությունների ընթացքում որոշ հարցերում դեռեւս չի հաջողվել գտնել երկու կողմերին բավարարող լուծումներ: Խոսքը մասնավորապես հանրապետության տարածքով անցնող նավթատարի հատվածում անվտանգության երաշխիքների, նրա տարածքով նավթի տարանցման դիմաց դատական, կողմերը դարձավորվում էին մինչեւ 1996 թ. դեկտեմբերի 1-ը առանձին համաձայնագիր կնքել Չեչնիայի Հանրապետության տարածքում նավթի հանույթի վերամշակման, փոխադրման, նավթամթերքների եւ գազի հարցերի շուրջ: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ռուսաստանի Դաշնության վառելիքի եւ էներգետիկայի նախարարությունում, Չեչնիայի տարածքով նավթի փոխադրման մասին դայմանագրի հիմնական դրույթները ներկայումս լրամշակվում են փոխադարձ խորհրդակցությունների ընթացքում: Սակայն բանակցությունների ընթացքում որոշ հարցերում դեռեւս չի հաջողվել գտնել երկու կողմերին բավարարող լուծումներ: Խոսքը մասնավորապես հանրապետության տարածքով անցնող նավթատարի հատվածում անվտանգության երաշխիքների, նրա տարածքով նավթի տարանցման դիմաց մասհանումների չափի եւ նավթամուղը վերջնականապես շահագործման նախապատրաստելու հետ կապված հարցերի մասին է:

Չեչենական հատվածը 1411 կմ ընդհանուր երկարությամբ Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի սոսկ մեկ տասներորդ մասն է: Այս տարվա օգոստոսին նրանով կսկսի փոխադրվել այսպես կոչված «նախնական» կամ առաջին նավթը Կասպից ծովի ընդարյա ցամաքալեզվակի հանքավայրերից, որոնք մշակում է միջազգային նավթաընկերությունների կոնսորցիումը:

Խոժ-Ահմեդ Յարիխանովը միաժամանակ հայտարարել է, թե «դաշնային Գրոզնին կցանկանար Չեչնիայի տարածքով նավթի փոխադրման հետ առնչված բոլոր խնդիրները լուծել առանց անհարկի հույզերի եւ ամեն տեսակ քաղաքական շահարկումների»:

ՍՐՍԵՆՊՐԵՍ

ԱՄՆ

Բիլ Քլինթոն. «Մեր խնդիրն է օգնել ստեղծելու անբաժան, ժողովրդավարական Եվրոպա»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը շարադրել է առաջիկա տարվա արտաքին քաղաքական օրակարգը: Նա Կոնգրեսի զույգ պալատների համատեղ նիստում ելույթ է ունեցել «Երկրի դրության մասին» ավանդական ուղերձով: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, նախագահը հայտարարել է, որ ԱՄՆ-ը «կանգնած է փոփոխությունների շեմին, երբ անհրաժեշտ է ընտրություն կատարել» այն նկատառումով, որ «եւս 50 տարի անվտանգություն ու բարգավաճում» ապահովի իր համար: «Մեր հիմնական խնդիրն է օգնել ստեղծելու պատմության մեջ առաջին անգամ անբաժան, ժողովրդավարական Եվրոպա, շարունակել է նա: Երբ Եվրոպան կայուն է, բարգավաճում է եւ ապրում խաղաղ, Ամերիկայի անվտանգությունն ամրապնդվում է: Այդ առնչությամբ մենք պետք է մինչեւ 1999 թվականն ընդարձակենք ՆԱՏՕ-ն, նպատակ ունենալով, որ այն երկրները, որոնք մի ժամանակ մեր հակառակորդներն էին, դառնան մեր դաշնակիցները»:

Ո՞վ կլինի Միացյալ Նահանգների հաջորդ նախագահը

ԱՄՆ-ում արդեն քննարկման առարկա են դարձել 2000 թվականի նախագահական ընտրությունները:

Այսպես, նախկին թեկնածու, հանրապետական ղեկավար Բոբ Դոուլը փետրվարի 3-ին տրված հարցազրույցում հայտարարել է, որ իր կինը՝ 60-ամյա էլիզաբեթ Դոուլը կարող է իր թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրություններին, թեեւ վերջինս հայտարարել էր, որ կգրաղվի Կարմիր խաչի տնօրենի պարտականություններով:

Քաղաքացիական իրավունքների պաշտպան Ջեսսի Ջեկսոնի խորհրդականը հայտարարել է, որ Սպիտակ տան գործունեությունից դժգոհ Ջեկսոնը խորհում է երրորդ անգամ մասնակցելու նախագահական ընտրապայքարին եւ այդ հարցով խորհրդակցել է Կոնգրեսի հանրապետական խոսնակ Նյուտ Գինգրիչի հետ:

Վերջապես, ըստ «Ռոյթեր» գործակալության հարցման, փոխնախագահ Ալ Գորը մեծ հնարավորություններ ունի դառնալու դեմոկրատական կուսակցության հաջորդ նախագահական թեկնածուն, իսկ հանրապետականների թեկնածուն, հավանաբար, կլինի պաշտպանության նախկին նախարար Քոլին Պաուելը:

«ԵՐԵՎԱՆ»

Օլբրայթը գործում է

Ըստ ԱՄՆ-ի պետքարտուղարության, գերատեսչության ղեկավար Մադլեն Օլբրայթն իր առաջին շրջայցի ընթացքում կայցելի Եվրոպական եւ ասիական ինը մայրաքաղաքներ: Սովորաբար պետքարտուղարները իրենց առաջին շրջայցը կատարում են Եվրոպայում, սակայն Եվրոպայի մասնագետ Օլբրայթը նախընտրել է այցելել նաեւ Ասիա՝ շրջանի կարեւորությունը շեշտելու նպատակով: Նախատեսված է հետեւյալ երթուղին. փետրվարի 15-16՝ Հռոմ, 16-17՝ Բոնն, 17-18՝ Փարիզ, 18՝ Բրյուսել, 18-19՝ Լոնդոն, 19-20՝ Մոսկվա, 22-23՝ Սեուլ, 23-24՝ Տոկիո, 24-25՝ Պեկին:

Փետրվարի 5-ին նա այցելեց Հյուսիսային հանդիպում ունենալու Մեխիկայի արտգործնախարար Խոսե Անգել Գուրիա Թրեւինոյի, նախկին նախագահ Ջորջ Բուշի եւ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի հետ:

«ԵՐԵՎԱՆ»

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստանում արեւմտյան լրտեսների աշխուժացո՞ւմ

4 ՓԵՏՐՎԱՐ, RFI, BBC: Պակիստանում վարչապետի պաշտոնից հեռացված Բենազիր Բհուտոյի «Պակիստանի ժողովրդի կուսակցությունը» երեկվա համընդհանուր ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց: Նախկին վարչապետ Նավազ Շարիֆի «Մահմեդական լիգա» կուսակցությունը խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ստացավ, եւ հաջորդ կառավարությունը կկազմավորի ընդդիմադիր այդ կուսակցությունը: «Պակիստանի ժողովրդի կուսակցությունը» խորհրդարանում ընդամենը 12 պատգամավոր կունենա, իսկ «Մահմեդական լիգան»՝ 117: Բենազիր Բհուտոն հրաժարվեց ճանաչել ընտրությունների արդյունքները՝ համարելով, որ դրանք կեղծված են: Սակայն դիտորդների խումբը հերքում է այդ մեղադրանքները:

Գների հերթական աճ Թուրքիայում

Հունվար ամսվա տվյալներով Թուրքիայում սպառողական ապրանքների գները աճել են 5,9, իսկ համախառն ապրանքների գները՝ 5,6 տոկոսով: Անցյալ տարվա հունվար ամսվա համեմատ սպառողական ապրանքների գները աճել են 75,7, իսկ համախառն ապրանքներինը՝ 78 տոկոսով:

Ֆրանսիան ձգտում է ետ չմնալ Գերմանիայից

Եվրամիության ընդլայնման հեռանկարում Ֆրանսիան ձգտում է մտերիմ հարաբերություններ հաստատել Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների հետ: Երկրի՝ Եվրոպական գործերի դեսպան-նախարար Միշել Բառնիեն հորդորել է, որպեսզի «տեխնիկական» բոլոր նախարարները տարեկան առնվազն երկու օր «այցելեն» այդ երկրները, քանի որ իրենց գերմանացի գործընկերները կանոնավոր ձեւով «արեւելյան» ուղղությամբ այցեր են կատարում: Սակայն, ինչպես երեւում է, միայն գյուղատնտեսության նախարար Ֆիլիպ Վասյորն անսաց այդ կոչին:

«ԷՔՍՊՐԵՍ»

Բուլղարիայում ձեռք է բերվել քաղաքական համաձայնություն

ՍՈՖԻԱ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ՆՏ. Բուլղարիայի հիմնական քաղաքական ուժերը, նախագահ Ստոյանովի խոսքերով, հասել են նվազագույն համաձայնության: Սոցիալիստական կուսակցության առաջնորդները հրաժարվել են կառավարություն կազմելու մանդատից: Սոցիալիստ Նիկոլայ Դոբրեւը հայտարարել է, սակայն, թե մանդատից հրաժարումը կուսակցության կոմիտեյացիան չէ: Նա համոզված է, որ ոչ ոք չի կարող նվաստացնել սոցիալիստական կուսակցությունը, կրճատել նրան համակրողների թիվը, դարձնել այն երրորդ կարգի քաղաքական ուժ: Սոցկուսակցության նախագահ Գեորգի Պարվանովը մտադիր է կուսակցության գերագույն խորհրդի հերթական նիստի ժամանակ վստահության քվե խնդրել:

Բհուտոյի կուսակցությունը ջախջախիչ պարտություն կրեց ընտրություններում

4 ՓԵՏՐՎԱՐ, RFI, BBC: Պակիստանում վարչապետի պաշտոնից հեռացված Բենազիր Բհուտոյի «Պակիստանի ժողովրդի կուսակցությունը» երեկվա համընդհանուր ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց: Նախկին վարչապետ Նավազ Շարիֆի «Մահմեդական լիգա» կուսակցությունը խորհրդարանում բացարձակ մեծամասնություն ստացավ, եւ հաջորդ կառավարությունը կկազմավորի ընդդիմադիր այդ կուսակցությունը: «Պակիստանի ժողովրդի կուսակցությունը» խորհրդարանում ընդամենը 12 պատգամավոր կունենա, իսկ «Մահմեդական լիգան»՝ 117: Բենազիր Բհուտոն հրաժարվեց ճանաչել ընտրությունների արդյունքները՝ համարելով, որ դրանք կեղծված են: Սակայն դիտորդների խումբը հերքում է այդ մեղադրանքները:

digitised by A.R.A.R.@

մշակույթ

ԹԳՄ-ի 97-ի ծրագրերում Անտիկ դրամատուրգիայի փառատոն Երևանում

Մայր թատրոնն, ասում են, «դարի ներկայացում» է բեմադրում: Չար լեզուները միանգամից վրա են տալիս «Մի տանիքի վերանորոգման ողբերգություն» վերնագրով: Բարի լեզուներն էլ երեւի ողողանձվել են (ասելիք չունեն), կամ էլ հաշտվել են այն մտքին, թե չկա-չի առատության մեջ նաեւ թատրոն չկա: Ցմեռը կաղ չունի հանդիսատեսն էլ է տրտնջում, դերասանն էլ: «Նվնվոցներ չեմ սիրում, ասում է ԹԳՄ նախագահ Երվանդ Ղազանչյանը, ում հարցնում եմ ի՞նչ կա միտքդ, եւ ով սկսում է ողբալ 97-ի ծրագրերից: Թատրոնի միջազգային օրվա մարտի 27-ի համար մեծ երեկո ենք ողբերգում, որին մասնակցելու են ոչ միայն Երեւանի, այլեւ հանրապետության թատրոններից էլ դերասաններ: Պետության ԹԳՄ-ին հատկացրած 5 մլն դրամը ոչ միայն բաժանում ենք չափազանց թոշակառուներին, այլեւ ԹԳ նախագահության որոշմամբ կիրակացվի 3-4 երիտասարդ բեմադրիչի ներկայացում ողբերգելու համար: Մայիսի 28-ին անկախության տոնին թատերական փառատոն նվիրելն ուզում ենք ավանդական դարձնել: Եթե անցյալ տարի Այուենիոմ հավաքվեցին հանրապետության տարբեր թատրոններ, ապա 97-ին փառատոնային բեմը կլինի Հայաստանի հյուսիսը: Գյումրի-Մարալիկ-Արթիկ-Աշոցք-Վանաձոր-Սղիտակ-Ալավերդի»: Որ բեմադրությունները, որ թատրոնները կներկայացվեն, դեռ դարզ չէ, բայց ըստ ծրագրի ընդգրկվելու է նաեւ Թբիլիսիի Պետրոս Ադամյան թատրոնը: Պարոն Ղազանչյանի հիշատակմամբ, 97-ն առաջ է հոբելյաններով. Սունդուկյան թատրոնի 75, Սանահնալովսկի ռուսական թատրոնի 60, Ղափլանյան դրամատիկ թատրոնի 30, Կաղանի թատրոնի 50-ամյակները: «Կան հոբելյաններ, որոնց «կողքից նայել» չենք կարող. Ավետ Ավետիսյանի եւ Գուրգեն Ջանիբեկյանի հարյուրամյակները, կարծում եմ, կառավարության ուշադրության կենտրոնում կլինեն», հույս է հայտնում ԹԳՄ նախագահը:

ՀՀ մշակույթի նախարարության հետ նախնական պայմանավորվածության համաձայն, սեպտեմբերին Երեւանում կանցկացվի Անտիկ դրամատուրգիայի փառատոն (թատերական գործիչների հաջորդ կլոր սեղանին սեվական տան անցքերը փակելու մտահոգությամբ նոր հոգոցներ կլսվեն «միլիոններն ո՞ւր են գնում»): Հայաստանյան 30-40 տարվա խաղացանկը («Իֆիգենիան Ավլիսում» Վ. Աճեմյանի բեմադրությամբ Սունդուկյան թատրոնում, «Մեդեան» Հ. Ղափլանյանի բեմադրությամբ դրամատիկ թատրոնում, «Մեդեան» Համլետ Հովհաննիսյանի բեմադրությամբ Գյումրիի թատրոնում, «Անտիգոնեն» Հակոբ Ղազանչյանի բեմադրությամբ Գյումրիի թատրոնում, «Անտիգոնեն» թատերական ինստիտուտի ուսանողական թատրոնի բեմում, «Էդիպ արքա» Ղափլանյանի բեմադրությամբ օպերային թատրոնում, հեռուստաթատրոնը հատվածներ է բեմադրել Արիստոֆանեսի «Ամպերից») «հնարավորություն» տալիս է Երեւանում նման փառատոն անցկացնել: Փառատոնին կներկայացվեն Պիտեր Շտայնի «Օրեստես» բեմադրությունը, մոսկովյան լավագույն դերասանների Սանկտ Պետերբուրգի Տովստոնոգով թատրոնի «Անտիգոնեն», Օլեգ Բասիլաշվիլու, մոսկովյան «Մեդեան» Ալլա Դեմիդովայի խաղարկմամբ: Ի դեպ, փառատոնին կմասնակցի նաեւ Պարոնյան թատրոնը: Երվանդ Ղազանչյանը բեմադրության է դասարասում Արիստոֆանեսի «Լիսիստրատը»:

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ավետիք Իսահակեանի նամակների նոր ժողովածուն

Լեզուաբան-բանասեր Մարտիրոս Սինասեանի զբաղմունքի հիմնական առարկան դասական բանասիրությունն է՝ ոսկեդարեան բնագրերը, նրանց լեզուական ու բնագրական խնդիրների քննությունը: Ժնեւի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչի դասընթացը մի քանի տարի առաջ թողնելով ու թոշակի անցնելով, նա սկսեց հրատարակել աւելի մեծ արդիւնաւետությամբ, իրար ետեւից լույս ընծայեց մեկը մեկից կարեւոր ծաւալուն ուսումնասիրություններ:

Միջոցների սղությունը նրան հարկադրում է բաւարարուելու սահմանափակ (մինչեւ 50 օրինակ) տպաքանակով, տպարանային ամբողջ սարքուկարգը երեւի մի համակարգիչ է ու դասձեւնահան մի մեքենայ, որոնց արտադրանքը անցկացուում է թղթի կազմ անող սարքի միջով: Տպագրելուն դէս հեղինակն անմիջապէս Հայաստանի մեծ՝ Ազգային, Մատենադարանի, Ակադեմիայի, Համալսարանի եւ այլ գրադարաններին է ուղարկում անհրաժեշտ քանակի օրինակներ: Վերջին շրջանում առանձին շնորհակալ դարձուածությունը վերցրել է ՄԱԿ-ի ժնեւի գրասենեակում Հայաստանի մշակական ներկայացուցիչ Յասմիկ Ստեփանեանը:

Պրոֆ. Մ. Սինասեանի բանասիրական վաստակի անվերադարձելի դրական գնահատականը հայագիտությունը դէտ է տայ մօտակայ ապագայում: Սակայն այս հաղորդման նիւթը այդ հիմնականից տարբերուող մի այլ խնդիր է. վաստակաշատ լեզուաբանը ժամանակ է գտնում օգտակար լինելու նաեւ իր զբաղմունքի հիմնական ոլորտին չվերաբերող ասպարէզներին. վերջերս տպագրեց Ֆրանսերէնից իր թարգմանած՝ «Ժան Ռիշպէն, Դոն Քիխոթ. հերոսագաւեշական թատերախաղ երեք մասով եւ ութ դասկերով» (ժնեւ, 1996) գրքոյկը, որի օրինակներ, գրադարաններից բացի, ստացան նաեւ Հայաստանի մեծ թատրոնները:

Իսկ օրեր առաջ ստացանք մի այլ կարեւոր աշխատութիւն. «Աւետիք Իսահակեան, Նամակներ ՀՀ. Բ(առնաբաս) Պիլէգիկեանին, Ն(երսէս) Ակինեանին, Սիմոն Յակոբեանին. Հրատ. Մարտիրոս Սինասեան. երկրորդ, սրբագրուած հրատարակութիւն» (ժնեւ, 1996): 78 մեծադիր էջ ունեցող այս գրքի նիւթն առաջին անգամ տպագրուել է «Բագին» հանդէսում (1983 թ. փետրուար-սեպտեմբեր), սակայն հրատարակիչը լիովին իրաւացի է, որ առանձին գրքով նամակների մէկտեղումը նրանց նիւթն աւելի գործածական եւ մատչելի է դարձնում. յատկապէս կրկին Հայաստանի մեծ գրադարանները (նաեւ՝ Չարենցի անուան գրական թանգարանը եւ Իսահակեանի տունթանգարանը) ստացան իրենց օրինակները:

Տպագրուած է ընդամենը 59 նամակ. Բ. Պիլէգիկեանին՝ 13, Ն. Ակինեանին՝ 8, Ս. Յակոբեանին՝ 38: Օրինակման արժանի է հեղինակի (այդ դէպքում՝ Իսահակեանի) ուղղագրութեանն ու կէտադրութեանը հարազատ մնալու՝ Մ. Սինասեան-հրատարակչի սկզբունքը. տպագրելու համար չնախատեսուած, երբեմն շատ գրուած երկտող-գրութիւնների յարդարանքը հեղինակն անկարեւոր է համարել, իսկ դրանց անաղարտ հրատարակումը շատ կարեւոր է Իսահակեանին ճիշտ հասկանալու եւ մեկնաբանելու համար:

Նոյնչափ էլ կարեւոր է նամակներն առանց մկրատելու հրատարակելը. հիմնովին մերժելի է դրականբացասական հերոսների շեշտուած հակադրութեանը նմանուող այն սկզբունքը, որով մեծութիւնը դարձուում է շարուած կուռք. մինչդեռ մեծերն էլ մարդ են՝ իրենց թուլութիւններով, թերութիւններով, տատամսումներով, սխալներով, տեղին կամ անտեղի կասկածներով, անվստահութեամբ, անկայունութեամբ կամ փոփոխամտութեամբ: Ճշգրիտ վերարտադրութեան սկզբունքի շնորհիւ այս նամակներում ներկայանում է իրական եւ մարդկային Իսահակեանը: եւ, իսկապէս, իրաւացի է Մինասեանը. Իսահակեանի արտասահման-Հայաստան «երբ ոգդարձը ունեցել է զանազան պատճառներ, տատանումներ, անվճռականութիւն, անորոշութիւն, զգուշութեան եւ այլ հոգեկան ապրումների պահեր, արտասահմանեան նիւթական անապահովութիւնը միշտ դեր չի կատարել վերջնական տունդարձի նրա որոշման մէջ, նա էլ մարդ է եղել մեր բոլորի պէս, ընտանիքի հայր, բուռն ինքնասիրութեամբ լցուած գիւմրեցի հայ, որ երբեք չի հաշտուել կեղծիքի եւ կեղծարարութեան կամ ֆենանքի հետ» (էջ 4):

Վիեննական Մխիթարեան վարդապետներին ուղղուած նամակները վերաբերում են առաւելապէս առօրեական խնդիրների, իսկ գրականագէտ, հրապարակախօս եւ դաշնակցական կուսակցական գործիչ Սիմոն Յակոբեանին ուղղուածները՝ աւելի բազմակողմանի ու արժէքաւոր են՝ Իսահակեանի քաղաքական եւ գրական գործունէութեան ճշմարիտ իմացութեան ու գնահատութեան համար: Այս շարքում Իսահակեանի բանաստեղծական արուեստի ըմբռնմանը նպաստող, յատկապէս նրա «Սասմա Մհեր»-ի ստեղծագործական ընթացքը պատկերող արժէքաւոր նամակների եւ նիւթերի մի մեծ շարք կայ:

Հրատարակչի առաջաբանն աւարտուում է հետեւեալ ձեւով. «Յուսանք, որ մի օր գրականագէտները կազմեն բանաստեղծի ու գրողի կեանքի (1875-1957) մանրամասն ժամանակագրութիւնը՝ օգտուելով նաեւ տպուած եւ դեռեւս անտիպ նամակներից ու նիւթերից»: Իսկ մենք լիայոյս ունենք, որ մի օր կտեսնենք Իսահակեանին երկերի լիակատար գիտական հրատարակութիւնը, ուր հեղինակային անաղարտ տեքստով ամբողջացած կլինի նաեւ նրա նամակագրական ժառանգութիւնը, որի մասը կկազմի նաեւ այս գրքի պարունակած նիւթը: Հենց այս կարեւոր նպատակի առումով էլ կարեւոր եւ շնորհակալ աշխատանք է արել Մարտիրոս Սինասեանը:

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն

ԳԵՂԱՆԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Գեւորգ Եղիազարյանի հաջողությունը Ամստերդամում

Ծնվել է 1963 թ. Գյումրիում. 1982 թ. ավարտել է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը. 1991-ին Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը. 1985-86 թթ. ուսանել է Սանկտ Պետերբուրգի Ռեպինի անվան արվեստի ակադեմիայում:

Գեղանկարիչ Գեւորգ Եղիազարյանը, չնայած երիտասարդ տարիքին, ստեղծագործական լուրջ փորձություններ երկար ճանապարհ է արդեն անցել: Ստոկհոլմի, Փարիզի, Դեսդոյթի խմբակային ցուցահանդեսներին զուգընթաց երեք անհատական ցուցահանդեսներ Բեյրութում, Երուսաղեմում, Ամստերդամում:

Ռեմբրանդի, Վան Գոգի, բազում այլ մեծանուն գեղանկարիչների թանգարաններով եւ հարյուրավոր դասկերասրահներով հարուստ քաղաք է Ամստերդամը: Լինելով Եվրոպայի խոշորագույն մշակութային կենտրոններից մեկը, ներկայումս արվեստի բիզնեսի խոշորագույն շուկաներից է: Արվեստի եւ գեղանկարչության մեջ չափազանց խորագիտակ եւ խստապահանջ հոլանդացիներին անշուշտ, շատ դժվար է գոհացնել: Արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները...

Ցուցահանդեսի դասընթացը տեղի ունեցավ հունվարի 18-ին Ամստերդամի հեղինակավոր «Donkersloot» դասկերասրահում, եւ հոլանդացիների իսկ գնահատությամբ մեծ հետաքրքրություն առաջ բերեց:

Բազմաթիվ այցելուներին հուզողը ամենից առաջ Գեւորգի կտավներում դասկերված անկեղծ զգացումներն էին, հուզական վառ կերպարները, գույների եւ գծերի զարմանալի ներդաշնակությունը կատարման բարձր տեխնիկան...

Արդեն ցուցահանդեսի ավարտից հետո Երեւան ուղարկված դասընթացական նամակում հոլանդական կողմը իր երախտագիտությունն է հայտնում իրենց դասկերասրահում գեղանկարչի ցուցահանդեսը կազմակերպելու հնարավորության համար: «Յուցահանդեսը, գրում են նրանք, մեծ հաջողություն ունեցավ, եւ մենք կցանկանայինք առաջարկել Ձեզ կրկին հրավիրել մեր դասկերասրահը»:

Ներկայումս գեղանկարիչը նախապատրաստվում է այս տարվա հոկտեմբերին ԱՄՆ-ում կայանալիք անհատական ցուցահանդեսին:

ԱՐԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

«Մանկիկը» Վարդանանց տոնին

Փետրվարի 5-ին Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի եւ Արարատյան հայրապետական թեմի համատեղ ջանքերով կազմակերպվել էր միջոցառում նվիրված Վարդանանց տոնին: Միջոցառման սկզբում Արարատյան հայրապետական թեմի երիտասարդաց միության «Մանկիկ» երաժշտական խմբակը, հանդիսատեսի հետ, ասաց «Հայր մերը», ապա դահլիճը ողողվեց ՀՀ հիմնի հնչյուններով: Մանուկները կատարեցին Գուսան Շահենի «Հայի տունը» երգը, Գյումրվա էսքիզներ», «Կովկասյան ռիթմեր», «Հովվի կանչը» եւ այլ ստեղծագործություններ:

«Մանկիկ» խմբակը, Շոթա Վարդանյանի ղեկավարությամբ, 1996 թ. հոկտեմբերին հյուրախաղերի էր մեկնել Լատինական Ամերիկայի երեք երկրներ եւ Սանկտ Պետերբուրգ, ուր արժանացել էր տարբեր մրցանակների եւ օտար ուկնդրի գովեստներին: Ձմռան այդ ցուրտ օրը չէր համարձակվում դահլիճ մտնել, քանզի կատարողներն այն ողողել էին ջերմ ու զվարթ հնչյուններով: Օրհնանքի խոսքով միջոցառումը ամփոփեց Տեր Համազասպը, որը շնորհավորեց «Մանկիկ» խմբակին՝ ցանկանալով նորանոր բեմեր եւ հաջողություններ:

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկու նոր ներկայացում՝ նոր թատերաշրջանում

ԵՐԵՎԱՆ 5 ՓԵՏՐՎԱՐ ՓԱՍՏ Երեւանի Էդգար Էլբակյանի անվան թատրոնը այս տարի նոր թատերաշրջանը կսկսի երկաթուղայիններին մշակույթի տանը: Նոր թատերաշրջանում թատրոնի խաղացանկը կլրացվի երկու նոր ներկայացումներով, որոնցից առաջինը Սայմոնի «Աստղափայլ աղջիկը» ստեղծագործության բեմականացումն է: Երկրորդ նոր ներկայացումը Շեխովի «Մակբեթն» է, որի փորձերը սկսվել են դեռ անցյալ տարի: Շեխովյան ներկայացումը բեմադրում է թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Էլբակյանը:

Յուցահանդես՝ նվիրված գրականագետ Սուրեն Աղաբաբյանին

Հայաստանի Ազգային գրադարանի ընդհանուր ընթերցարահում կազմակերպված նոր ցուցահանդեսը նվիրված է ականավոր գրականագետ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Աղաբաբյանի (1922-1986) 75-ամյակին:

Գրականագետը նախ աշխատել է մանուլում, ապա ավելի քան երեսուն տարի (1954-1986) եղել է ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի խորհրդային գրականության բաժնի վարիչ:

Ցուցահանդեսի գրքերի մի մասը նվիրված է Նաիրի Զարյանի, Ստեփան Զորյանի, Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու եւ կնոջ՝ Հրաչյա Հովհաննիսյանի ուսումնասիրությանն ու վերլուծությանը: Նշանավոր է հատկապես նրա «Եղիշե Չարենց» երկհատոր մենագրությունը, որի համար արժանացել է պետական մրցանակի դափնեկրի կոչման: Կյանքի վերջին տարիներին նա գրեց «Սովետահայ գրականության պատմություն» ծավալուն աշխատությունը: Նա հրատարակել է նաեւ գրական-քննադատական հոդվածների մի քանի ժողովածու, գրել դպրոցական դասագիրք տասներորդ դասարանի համար:

Աղաբաբյանի մենագրություններից մի քանիսը լույս են տեսել նաեւ ռուսերեն:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿ

Ըմբիշները օլիմպիական նոր փուլը սկսեցին Յարիգինի մրցաշարից

Թեև Հայաստանի պատվիրակները չմասնակցեցին մրցաշարին, բայց հայ ըմբիշը հաղթողների շարքում է

Մի քանի օր առաջ Ռուսաստանի Կրասնոյարսկ քաղաքում ավարտվեց ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարը, որտեղ խաղարկվեցին օլիմպիական չեմպիոն Իվան Յարիգինի մրցանակները: Ավանդաբար այս ստուգատեսին մասնակցում էին նաեւ Հայաստանի պատվիրակները: Սակայն այս տարի նրանք չմեկնեցին մրցավայր:

Հրայր Նազարյան

«Սովետսկի սպորտ» օրաթերթը իր վերջին համարներից մեկում անդրադարձել է մրցաշարին: Նշվում է, որ այն մեծ հետաքրքրություն էր առաջացրել մարզասերների շրջանում: Դա դատական չէր, քանզի մրցաշարում մի քանի անակնկալներ գրանցվեցին: Դրանցից առաջինը կայացավ 54 կգ քաշային կարգում: Օլիմպիական խաղերի արծաթե մրցանակակիր, եվրոպայի չեմպիոն Նամիկ Աբդուլաեւը Ադրբեջանից չկարողացավ կոտրել Ռուսաստանի գավաթակիր Մախմ Մոլոնովի (Բուրիաթիա) դիմադրությունը: Մրցամարտի հիմնական ժամանակը չորոշեց հաղթողին: Ըմբիշները «համաձայնության» չեկան նաեւ լրացուցիչ երեք ոտքերում: Հաղթողին որոշեց մրցավարական խումբը, եւ մրցավարներն իրենց համակրանքը տվեցին Մոլոնովին:

Համառ պայքար էր ծավալվել նաեւ աշխարհի չեմպիոններ ռուսաստանցի Մագոմեդ Ազիզովի եւ ուկրաինացի Էլբրուս Տեղեեւի միջեւ: Հետաքրքիր փաստ է օլիմպիական չեմպիոն, ամերիկացի Կենդալ Կրոսսը խիզախել էր հանդես գալ նույն քաշային կարգում (63 կգ): Սկզբից նա վստահորեն առաջ ընթացավ մրցաշարային ցանցով, սակայն այնուհետեւ «սայթաքեց» Տեղեեւի հետ գոտեմարտում եւ արդյունքում նույնիսկ չհայտնվեց մրցանակակիրների թվում: Իսկ Ազիզովը ոչ միայն կարողացավ գրավել մրցակցի գրոհները, այլեւ հաղթանակ տոնեց:

Տեղացիները հիացմունք են արտահայտել, երբ եզրափակիչ գոտեմարտի են դուրս եկել նրանց համաքաղաքացիներ օլիմպիական չեմպիոն Բուվայսար Սայտիեւը եւ նրա թիմակից Ադամ Բարախոեւը: Հետաքրքիր է, որ առաջինը մրցաշարի ընթացքում հիվանդանալով, այնուայնմենայնիվ բոլոր գոտեմարտերում մրցասպարեզը թողել է հաղթանակած: Ինչպես նկատել են մասնագետները, իր ուժերի նկատմամբ միշտ վստահ լինելու առումով ըմբշամարտում Սայտիեւը մրցակից չունի: Թեեւ Բարախոեւը պարտվել է, սակայն նրա արծաթե պարգեւը ավելին արժե, քանզի մրցակիցը 76 կգ քաշային կարգի «արքան» էր:

Հետաքրքիր իրադրություն էր ստեղծվել 58 կգ քաշային կարգում: Այստեղ եզրափակիչում հանդիպել են օլիմպիադայի մրցանակակիր, կանադացի Գիվի Սիսաուրին եւ Վրաստանից երիտասարդ ըմբիշ Դավիթ Պողոսյանը: Վրաստանցի մեր հայրենակիցը պինդառին հաղթահարել է տարել:

Կրկին մրցագորգ էր դուրս եկել Սայտիեւը: Եւ մեկ անակնկալ: 69 կգ քաշային կարգում ոսկե մեդալն է վիճարկել օլիմպիական չեմպիոնի 19-ամյա եղբայրը Ադամ Սայտիեւը: Նրա մրցակիցն է եղել պորտի վաստակավոր վարպետ, օլիմպիադայի մրցանակակիր Զազա Զոզիրովը Ուկրաինայից: Արժանի պայքարում Սայտիեւը գիջել է մրցակցին:

Բավականին վստահ է հանդես եկել 97 կգ քաշայինների պայքարում վրացի ըմբիշ Էլդար Կուրտանիձեն: Նրան ոչինչ չի կարողացել հակադրել ռուսաստանցի Ասլան Խագուրովը: Ուժեղագույնի իր կոչումը հաստատել է նաեւ օլիմպիական չեմպիոն ռուսաստանցի Հաջիմուրատ Մագոմեդովը, որը հանդես էր գալիս 85 կգ քաշային կարգում: Լավագույնը գագաթնակետին է հասել, երբ մրցագորգ են դուրս եկել ծանր քաշի (125 կգ) իսկական ռուսաստանցիներ Դավիթ Մուսուլբեսը եւ Օլեգ Խորոյանովը: Պետք է արժանին տալ Մուսուլբեսին, որը խիզախորեն պայքարել է:

Այսպիսով, Յարիգինի մրցաշարի հաղթողները հայտնի դարձան: Բայց Կրասնոյարսկը հրաժեշտ չի տալիս ազատ ոճի ըմբշամարտին: Օգոստոսին այստեղ կմեկնարկի աշխարհի առաջնությունը:

Մրցաշարի հերոսը Իվան Յարիգինը ավարտից հետո նշել է. «Կարեւոր իրադարձություն է տեղի ունեցել. այժմ մենք 8 քաշային կարգեր ունենք: Դուրս են եկել 48 կգ եւ 90 կգ քաշային կարգերը: Այստեղ առաջին անգամ փորձարկվեցին նոր կանոնները: Փաստորեն, այս ստուգատեսից սկսվում է օլիմպիական փուլը: Ես ինքս սկսել եմ պայքարել 97 կգ քաշային կարգում: Այնուհետեւ այն հասցրեցին մինչեւ 100 կգ, իսկ այժմ կրկին 97 կգ: Ստացվում է, որ նորը դա լավ մոռացված հինն է: Նոր կարգին պետք է համակերպվել եւ դրանով ուղեկցվել մինչեւ 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերը: Իսկ այնտեղ արդեն ՖԻԼԱ-ի նստաշրջանը կորոշի՝ արդարացրել է իրեն փորձը, թե ոչ»:

Ի դեպ, օլիմպիական չեմպիոն, ամերիկացի Կենդալ Կրոսսը մրցաշարի ավարտից հետո հայտարարել է, թե պատրաստվում է ավարտել իր ելույթները եւ դառնալ մարզիչ:

Ինչպես Ռենդըլն անակնկալի բերեց Չավեսին

Երեք տարվա վաղեմության պատմություն

Միշտ անպարտելի 31-ամյա Խուլիո Սեզար Չավեսը հայտարարել է, թե եկող տարի ինքը կլրացնի իր մենամարտերի հարյուրյակը: Մեխիկացի այս բազմաստիղոս բոնցամարտիկը (գերթեթեւ քաշում WBC-ի, թեթեւագույն քաշում IBF-ի եւ թեթեւ քաշում WBA-WBC-ի նախկին չեմպիոն), սկսած 1989 թ. մայիսից թեթեւագույն քաշային կարգում WBC-ի չեմպիոն է եւ կարող է մի արժանավոր հակառակորդի: Երեք տարի առաջ, 1994-ի հունվարի 29-ին՝ Լաս Վեգասի նոր մեծ հյուրանոց-խաղատան հանդիսավոր բացման շրջանակում, հոչակավոր մեխիկացին պաշտոնեց իր տիտղոսը՝ ընդդեմ ամերիկացի Ֆրենկի Ռենդըլի: Անշուշտ, վերջինս որակավորված էր որպես պաշտոնական հավակնորդ, սակայն իր 32 տարեկան հասակում նա հաղթելու ոչ մի շանս չուներ: Ըստ իր սովորության վիրաբույժի տեսով՝ դիմակավոր, վարսապաշտպանի տակ ինչ բարձրանալով 12 հազար հանդիսականների սուլոցներ ներքո, ամերիկացին ակնբախորեն հավատում էր հաղթանակին: Բայց, հազիվ դիմացավ չորրորդ, վեցերորդ եւ յոթերորդ ռաունդներում: Հույս դնելով կամքի եւ ֆիզիկական ուժի վրա՝ նա անընդհատ առաջ էր գնում եւ մտնում փոխադարձ աներեւակայելի հարվածների պայքարի մեջ: Եվ վերջապես, տասնմեկերորդ ռաունդում, «ստանալով» դիմահարի կրկին կարգի «արքան» էր:

հարված ծնոտին, Չավեսը իր մարզական կենսագրությունում առաջին անգամ գետնվում է ռինգի հարթակին: Նա վեր է կենում, եւ կատաղի գոտեմարտը շարունակվում է մինչեւ գոնգի վերջին զարկը: Դատավորների ձայները բաժանվում են. երկուսը՝ ամերիկացի Ջամպան (116-111) եւ պուերտոռիկացի Գուզմանը (114-113) արտահայտվում են հավակնորդի օգտին, մինչդեռ մեխիկացի Չավարիան (114-113) նախապատվությունը տալիս է իր հայրենակցին: Այսպիսով՝ Ռենդըլը հայտարարվում է նոր չեմպիոն, այն պարագայում, երբ եթե ամերիկացի մարտավար Ռիչարդ Սթիլը չնշանակեր Չավեսին երկու տուգանային միավոր յոթերորդ եւ տասնմեկերորդ ռաունդներում՝ գոտկատեղից ցածր հարվածելու համար, Գուզմանն էլ, մեխիկացուն վեր դասեր, ապա, մեծն մեխիկացին այդ անգամ էլ կմնար «լավագույնի» իր համար սովորական դիրքում:

Պատրաստեց
ՍԵՐԳԵՅ ՄԱՐՏՈՅԱՆԸ

ՀԵԾԱՆՎԱՎԱՔ

Գրիգորյանը իրեն հավասարը չունի «Կրիլատսկիում»

Սպորտվարչության լրատվական ծառայությունից տեղեկացնում են, որ հաջող ելույթներ Մոսկվայի «Կրիլատսկի» հեծանվահրապարակում անցկացվող Ռուսաստանի բաց առաջնությունում շարունակում է հայ հեծանվորդ Գրիգոր Գրիգորյանը: Մրցումների երրորդ օրը նա առաջինն է ճանաչվել «Կեւին» մրցաթեւում՝ համապատասխանաբար 5 եւ 7 միավորներով առաջ անցնելով երկրորդ եւ երրորդ արդյունքները ցույց տված մրցակիցներից: Երեք օրվա արդյունքներով, Գրիգորյանը վստահորեն ընթանում է առաջին տեղում:

Հայ հեռացատկորդը կպատրաստվի նոր մեկնարկներին

Սպորտվարչության լրատվական ծառայությունից հայտնում են, որ Ֆրանսիայում մարզվող գյումրեցի հեռացատկորդ Ռոբերտ Էմմիյանը 1996 թվականի արդյունքներով թեթեւատլետիկայի միջազգային ֆեդերացիայի հրապարակած արդյունակում 50 մարզիկների մեջ զբաղեցնում է 45-րդ տեղը: Այս ցուցանիշը Էմմիյանին թույլ է տալիս մասնակցել 1997 թվի աշխարհի առաջնությանը եւ «Մեծ մրցանակի» շարքի բոլոր մրցումներին:

Ռուսները լավագույնն են Եվրոպայում

Օլիմպիական չեմպիոններ ռուսաստանցիներ Սվետլանա Մաստերկովան (թեթեւատլետիկա) եւ Ալեքսանդր Պոպովը (լող) մրցաշրջան-96-ի արդյունքներով ճանաչվել են Եվրոպայի լավագույն մարզիկներ: Մարզական մամուլի եվրոպական միության հարցման արդյունքներով Պոպովը վաստակել է 53 միավոր, զգալիորեն առաջ անցնելով «Ֆորմուլա-1» ավտոտարավի անցյալ տարվա չեմպիոն, անգլիացի Դեյմոն Հիլից, որի անվան առջեւ 23 միավոր է գրանցվել: Միջին տարածությունների վազորդուհի Սվետլանա Մաստերկովան աշխարհամասի լավագույն մարզուհի է ճանաչվել 54 միավորով: Նա շրջանցել է ֆրանսուհի թեթեւատլետ Ժոզե Մարի Պերեկին (49 միավոր):

Շախմատի համաշխարհային կենտրոնը տեղափոխվել է Իսպանիա

Արհեստավարժ շախմատային ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը հնդիկ գրոսմայստր Վիշվանաթան Անանդի նկատմամբ հաղթանակով սկսեց իր ելույթները իսպանական Լինարես քաղաքում մեկնարկած շախմատի միջազգային մրցաշարում: Այս մրցաշարում բուլղարացի Վեսելին Թոփալովը պարտություն մատնեց ուկրաինացի Վասիլի Իվանչուկին: Ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկը եւ բելառուս գրոսմայստր Բորիս Գելֆանդը խաղաղ ելքով ավարտեցին մրցամարտը: Տեղացի շախմատասերների սպասելիքները չարդարացրեց Իսպանիայի դրոշի ներքո հանդես եկող Ալեքսեյ Շիրովը, որը հանդես գալով սպիտակ խաղաքարերով, պարտվեց հոլանդացի Յարեն Պիկեթին:

Ավելացնենք, որ փետրվարի 8-ին Իսպանիայի մեկ այլ քաղաքում՝ Ուբեդոյում կայանալիք միջազգային մրցաշարում կմեկնարկի նաեւ երեւանցի Վլադիմիր Հակոբյանը:

ՀԱՄԱՌՈՏ

Աշխարհի առաջնությունը շարունակվում է

Գնդակով հոկեյի աշխարհի առաջնությունում Ռուսաստանի հավաքականը ոչ-ոքի խաղաց Նորվեգիայի ընտրանու հետ (3-3): Շվեդիայի հոկեյիստները վստահորեն հաղթեցին Ղազախստանի թիմին՝ 15-4:

Կանչելսկիսը տեղափոխվում է հարավ

Անգլիական «էվերտոն» ակումբի ռուսաստանցի կիսապաշտպան Անդրեյ Կանչելսկիսը, որը «Մանչեստր Յունայթեդից» տեղափոխվել էր 1995 թվին եւ անցյալ տարի արդեն հասցրել էր դառնալ այս ակումբի լավագույն ռմբարկուն (16 գոլ), ռեկորդային գումարով (14 մլն դոլար) վաճառվել է իտալական «Ֆիորենտինային»: Այս թիմը 9-րդ տեղում է ընթանում իր երկրի ազգային առաջնությունում: Հիշեցնենք, որ 1992 թվին Անդրեյը Ռուսաստանի հաղաքականություն է ընդունել եւ այս երկրի մարզական պատիվը պաշտպանել Եվրոպայի երկու առաջնություններում:

Ինդոնեզիան եւս հավակնում է

Մինչ մոտենում է 2004 թվի ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաքի ընտրության պահը, Ինդոնեզիան հավակնում է 2008 թվականի մարզական խաղերը կազմակերպելուն:

Երկրի նախագահ Սուխարտոն հայտարարել է, թե հույս ունի Ինդոնեզիային ընդունել 2006 թ. Ասիական խաղերը եւ 2008 թ. օլիմպիադան: Այժմ՝ երիտասարդության հարցերով եւ սպորտի նախարար Խանոն Իսմանը պետք գնահատի նման զանգվածային մարզական մրցումներ անցկացնելու հնարավորությունները:

«Ֆրանս ֆուտբոլի» «ոսկե հավաքականը»

«Ֆրանս ֆուտբոլ» հանդեսում հրապարակվել է 1996 թվականի խորհրդանշական «ոսկե հավաքականը», որը կազմված է Եվրոպայի առաջատար ակումբներում հանդես եկող ֆուտբոլիստներից: Ներկայացնում ենք «լաստ[illegible]-ի» այդ յուրօրինակ ընտրանին. դարպասապահ՝ Անդրեաս Կյոպկե («Օլիմպիկ», Մարսել, Ֆրանսիա), պաշտպաններ՝ Մաթիաս Զամմեր («Բորուսիա», Դորտմունդ, Գերմանիա), Մարսել Դեսայի («Միլան», Իտալիա), Տրիֆոն Իվանով («Ռապիդ», Վիեննա, Ավստրիա), կիսապաշտպաններ՝ Մարկուս Բեյրլ («Աստեսիկ», Բիլբաո, Իսպանիա), Քրիսթիան Ցիգե («Բավարիա», Մյունխեն, Գերմանիա), Դիդիե Դեշամ («Յուվենտուս», Տուրին, Իտալիա), ազատ կիսապաշտպան՝ Ալեսանդրո Դել Պիերո («Յուվենտուս»), հարձակվողներ՝ Ռոնալդո («Բարսելոն», Իսպանիա), Յուրգեն Քլինսման («Բավարիա») եւ Գաբրիել Շիրեր («Նյուքասլ Յունայթեդ», Անգլիա):

digitised by A.R.A.R.@

ԱՌՕՐ

Օրվա հետքերով

ԵՐԲԱՔ

Պաշտոնական Բաքուն դժգոհ է ԵԱՀԿ համանախագահի պաշտոնում Ֆրանսիայի նշանակումից

ԲԱՔՎՈՒ, 5 ՓԵՏՐՎԱՐ, ԼՈՒՍԱՆ ՏԱՊԱՆ, ANS PRESS. Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը ԵԱՀԿ Մինսկի խմբում Գերմանիայի դեսպան Մարտին Քրիստիանսենի հետ հանդիպման ընթացքում դժգոհություն է արտահայտել առանց Ադրբեջանը կարծիք հարցի առնելու ԵԱՀԿ համանախագահ Ֆրանսիայի նշանակումից:

Բնդունելս հաղորդում է ANS-press գործակալությունը, Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանը փոխզիջման է դիմում և ընդունում է այդ հարցում մյուս կողմերի կարծիքը: Նա նշել է նաև, որ դեռևս անցած տարվա դեկտեմբերին Ադրբեջանի ՊԳԱ դիվանագետ Հասան Հասանովը ԵԱՀԿ նախկին գործող նախագահ Ֆրալիս Կոստինին հայտնել է պաշտոնական Բաքվի տեսակետը, որ Ադրբեջանը Մինսկի խմբում երկրորդ համանախագահ է ցանկանում տեսնել ԱՄՆ-ին: Սակայն, ընդգծել է Հ. Ալիևը, Ֆ. Կոստին ամենևին Ադրբեջանի կարծիքը այդ պաշտոնում նշանակում է Ֆրանսիային, դրանով իսկ, բարդացնելով խնդիրը:

Հ. Ալիևի խոսքերով, Ադրբեջանի ղեկավարությունը բավական վրդովված է կատարում մեր դեմ ուղղված դրսևորումներ, որոնք ուղղակի հակասում են իրենց ստանձնածներին: Նա հեռ մեկ անգամ ընդգծել է, որ Ադրբեջանը դեմ է ԵԱՀԿ այդ մեխանիզմի ստեղծմանը, այլ ոչ թե Ֆրանսիային: Պետությունը դեկտեմբեր է եղել, որ Միացյալ Նահանգները, որ ասեն նախագահ է ներկայացրել իր թեկնածությունը Մինսկի խմբի համանախագահի պաշտոնի համար, ի տարբերություն Ֆրանսիայի, ակտիվորեն մասնակցում է դարաբաղյան հակամարտության կարգավորմանը:

Հայտնելով հայ-ադրբեջանական հակամարտության արագ և դրական կարգավորման հարցում Գանիայի շահագրգռվածության մասին, դանիացի դիվանագետը հայտարարել է ստեղծված բարդ իրադրության հետ Գանիայի չհաշտվելու մասին: Նա հայտնել է իրավիճակին ծանոթանալու նպատակով հակամարտության գարածաշրջան այցելելու իր մտադրության մասին: Ս. Քրիստիանսենի խոսքերով, Ֆրանսիան համանախագահ է ընտրվել հակառակ Ադրբեջանի ցանկության և այդ պատճառով ԵԱՀԿ-ն կանխարգելիչ ոչինչ է փնտրում ստեղծելու նոր համանախագահություն ԱՄՆ մասնակցությամբ: Նրա խոսքերով, Երևանում կայացած բանակցությունների ընթացքում պարզ է դարձել, որ Հայաստանը հանձնայն է Մինսկի խմբում Ռուսաստանի և Ֆրանսիայի համանախագահությանը, իսկ ԱՄՆ-ի, որպես երրորդ կողմի, ներգրավման հարցի ողջությամբ ակտիվ խորհրդաստվություններ են վարվում և վերջնական որոշում առայժմ չկա:

ԵԱՀԿ Մինսկի խմբում նոսկողմ համանախագահության հարցում Ադրբեջանի դիրքորոշումը կիսա կեցվի մոտակա ապագայում ընթացքում, սակայն Մինսկի խմբում Ռուսաստանի և ԱՄՆ-ի առաջնայնությունը հաս ավելի լավ տարբերակ է: ANS-press գործակալությանը տված հարցազրույցում այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտաքին հարաբերությունների պետ խորհրդական Վաֆա Գուլուզադեն:

Գեմիրելը Ալիևին հրավիրեց Թուրքիա

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը Բաքվում ընդունել է Թուրքիայի արտգործնախարարության Կոզկասի, Միջին Ասիայի, Բալկանների և սահմանամերձ երկրների բաժնի պետ, ավագ դեսպան Այբեն Հահինքալին: Հահինքալը Ալիևին է հանձնել Թուրքիա այցելելու նախագահ Ս. Դեմիրելի հրավեր: Ալիևը գոհունակությամբ ընդունելով հրավերը ասաց. «Անկախություն ձեռք բերելուց հետո Թուրքիան միշտ էլ եղել է Ադրբեջանի կողքին և հատկապես Հայաստանի հետ հարաբերությունների հարցում պաշտպանել է Ադրբեջանի շահերը»: Ալիևը հայտարարեց, որ ԵԱՀԿ-ի շրջանակներում խնդրի հնարկման ուղղությամբ որևէ գիրքորոշում չեն դեռ:

Յանդարբիևը Չեչնիայից արտաքսեց Գուլդեմանին

5 ՓԵՏՐՎԱՐ, RI, BBC, DW. ԵԱՀԿ-ի խոսնակ Մերիան Դելմիկոը հայտարարեց, որ ԵԱՀԿ-ն հետևում է Չեչնիայում ծավալվող դեպքերին և հուսով է, որ Ռիթա Գուլդեմանը Չեչնիա վերադառնալու հնարավորություն կստանա: Գուլդեմանը Չեչնիայից արտաքսվեց երեկ, դեռևս գործող նախագահ Զելիմխան Յանդարբիևի կարգադրությամբ: Նա արտաքսվեց այն բանի համար, որ ասաց, թե Չեչնիան Ռուսաստանի Դաշնության մաս է կազմում: Այժմ Գուլդեմանը գտնվում է հարևան Ինգուշիայի մայրաքաղաք Նազրանում: Նորքսիր նախագահի Ապտի Մատիևագովը տեղյակ չի եղել Գուլդեմանի տուսափելու ծիլիցոնների ուղեկցությամբ Չեչնիայից արտաքսման մասին: Նրա կողմնակիցների խոսքերով Յանդարբիևը հեռախոսով առաջ զարգացրել է «դուրս շրխկացրել է» ԱՄՆ-ի ռեդերարատանենի խոսնակ Նիկոլաս Բյուռնսը: Զելիմխան Յանդարբիևին կոչ արեց անհապաղ վերանայել այդ որոշումը: Իսկ Ռուսաստանի կառավարությունը չեղյալ հայտարարեց Գուլդեմանի արտաքսման մասին Չեչնիայի դեկավարության որոշումը: Ռուսաստանի արտգործնախարարության հայտարարագրում նշված է, որ Չեչնիայի դեկավարությունն իրավասու չէ լուծելու ԵԱՀԿ-ի աշխատակիցների Ռուսաստանի տարածքում ճնշում կամ արտաքսելու հարցերը: Հայտարարագրում ընդգծված է, որ եթե որ Չեչնիան մտնում է Ռուսաստանի կազմի մեջ, ապա համապատասխան լուծումները պիտի ընդունվեն Մոսկվայում:

ԱՄՆ

Օրեկ Սիմփսոնը ոստիկանի հետ շրջագայվելու համար դատարանը նրան սանկցիա կիրառեց

5 ՓԵՏՐՎԱՐ, BBC, VOA. Երկրպագուները ամենակարելոր հարցերը սեռամերձ հարաբերություններ են, ինչպես Օրենսպահ Ջեյմս Սիմփսոնի գործի դատավարությունում ճեղավոր ճանաչեցին նրան իր նախկին կնոջ Նիկոլի և նրա քահանա Ռոնալդ Գոլդմանի մահվան մեջ, որում սպանվել են 94 թվականին: Լոս-Անջելեսում Սանտա Մոնիկա հրաբխի դատարանը չի սազ բանտարկության դատապարտել, սակայն որոշեց, որ Սիմփսոնը պետք է 8,5 ճիշ դոլար հատուցում տա Ռոնալդ Գոլդմանի ազգականներին: Մոտակա տարիներ ասելու ամենը կտրուկ, թե թոշակառու Օ. Սիմփսոնը դեռևս ոչինչ չի ասել Սիմփսոնը ամենևին էլ մահվան Դատարանի դատավարությունը Սիմփսոնին ամենևին էլ մահվան: Սակայն Սիմփսոնը ոստիկանի հետ շրջագայվելու համար դատարանը նրան սանկցիա կիրառեց: Դատավորը Սիմփսոնին հրամայեց 1 տարի ոստիկանի հետ շրջագայվել